# Ազգ

Azg

2 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ԵՐԵՔՇԱԲԹԻ 171(5023)

ISSN: 1829-1651


# Փոքրիկ ... մատնոցում, ըստ Վարդան Օսկանյանի

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԲՀԿ պատգամավոր Վարդան Օսկանյանին որպես մեղադրյալ ներգրավելու գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի միջնորդագրի՝ Ազգային ժողովում երեկվա քննարկումը կողքից դիտողի մեջ հակասական տպավորություն ստեղծեց, մղելով ենթադրություններ անել ոչ միայն մեկ՝ քաղաքական ենթատեքստով իրողության, այլ զուգահեռ եւս երկու այլ սցենարի հնարավորության: Երբեմն քննարկումը նմանվում էր գլխավոր դատախազի «պադստավկայի», քանի որ Օսկանյանին ուղղված մեղադրանքները գոնե ամեն ինչ տեսած լրագրողիս հայացքով ամենեւին համոզիչ չէին: Երբեմն, ու հատկապես այն դեպքերում, երբ ՀՀԿ-ականները մեղմ հարցադրումներով էին դիմում Օսկանյանին, կարելի էր կասկածել ԲՀԿ-ից իսկապես ընդդիմություն ձուլելու սցենարի մասին՝ նախագահական ընտրությունից առաջ դաշտը ծածկելու փորձ:



ՖՈՏՈԼՈՒՐ

Բայց սրանք միայն ենթադրություններ են, իսկ սեփական եզրակացության ընթերցողն ինքը կարող է գալ դեպքերի զարգացման հաջորդականությամբ մեր պատմությունը կարդալուց հետո: Դատախազն իր միջնորդագրում հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր դրամական միջոցներն օրինականացնելու եւ յուրացման մասին էր խոսում, նշելով, որ ԱԱԾ քննչական վարչությունը մայիսի 25-ին հարուցած քրեական գործի նախաքննությամբ բավարար ապացույցներ է ձեռքբերել առ այն, որ «Սիվիլիթաս հիմնադրամի հիմնադիր եւ հոգաբարձուների խորհրդի նախագահ Վարդան Օսկանյանը յուրացրել է բարեգործության համար իրեն վստահված գումարը, տարաբնույթ գործողությունների արդյունքում մի շարք հոդվածներով բնորոշվող հանցագործություն կատարել. չխորանանք տարբեր հաշիվների մեջ՝ ի վերջո 1մլն 427 հազար ԱՄՆ դոլար, ըստ միջնորդագրի մեղադրանքի, Օսկանյանը փոխանցել է ՎՏԲ Հայաստան բանկի իր հաշվեհամարին՝ «Սիվիլիթաս» հիմնադրամին ամբողջությամբ փոխանցելու փոխարեն:

Տես էջ 8

# Նա «հասկանում է», որ իրավունք չունի, բայց ...

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**ԵԽԽՎ Բյուրոն քննարկել է Ռամիլ Սաֆարովի հետ կապված հարցը: Այդ առթիվ հայտարարությամբ հանդես է եկել կառույցում ադրբեջանական պատվիրակության ղեկավար Սամադ Սեիդովը: Նա ասել է, որ երբ իրենք որեւէ հարց են քննարկում, ԵԽԽՎ-ն խորհուրդ է տալիս՝ «լինել օբյեկտիվ, լսել բոլոր կողմերի կարծիքը»: Ըստ ադրբեջանցի խորհրդարանականի՝ «Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ գոյություն ունի հակամարտություն, եւ լավ կլիներ, եթե լսվեր երկու կողմերի կարծիքը»:**

**Սեիդովը անգոհունակություն է հայտնել իրողությունից, որ ԵԽԽՎ Բյուրոն ուշադրության է առել հայկական կողմի կարծիքը. «Ինչո՞ւ մենք չենք հրավիրվել այդ նիստին: Մենք այստեղ կարող էինք այդ հարցում ներկայացնել մեր դիրքորոշումը, քանի որ Ռ. Սաֆարովի հարցը ուղղակիորեն առնչվում է ադրբեջանա-հայկական հակամարտությանը: Ես եկել եմ այդ նիստին եւ ասել, որ ուզում եմ մասնակցել, բայց ինձ հայտարարել են, որ ընթացակարգի համաձայն ես դրա իրավունքը չունեմ: Ես հասկանում եմ, որ իրավունք չունեմ, բայց հանուն օբյեկտիվության իմ ներկայությունը պարտադիր էր այդ նիստին»,- ասել է Սեիդովը:**

Տես էջ 8

# Միջազգային արձագանք Օսկանյանի գործին

**Ինչպես եւ սպասվում էր՝ Վարդան Օսկանյանի դեմ հարուցված քրեական գործը բավական մեծ ռեզոնանս է հարուցել: Երեկ «Ազգն» արդեն ստանում էր այս թեմայով արձագանքներ: Հանրահայտ երգիչ, «Սիվիլիթասի» պատվո խորհրդի անդամ Սերժ Թանկյանը իր հայտարարության մեջ նշել է, թե Վարդան Օսկանյանի հետապնդումն ակնհայտորեն քաղաքական բնույթ ունի: Ջոն Հանթսմանը 2011-ին է «Սիվիլիթասի» միջոցով գումար տրամադրել Վ. Օսկանյանին, բայց Օսկանյանի դեմ գործողություններ իրականացվեցին, երբ նա քաղաքականություն վերադարձավ 2012-ին: Ապա հայտարարության մեջ խոսվում է մամուլի, տնտեսության եւ պետական կառույցների նկատմամբ մենաշնորհի վերացման անհրաժեշտությունից եւ խորհրդային ժամանակից ժառանգված տնտեսությունն ու քաղաքականությունը վերահսկելու գործելակերպը միահամուռ հաղթահարելուց:**

**Աշխարհահռչակ ռեժիսոր Ատոմ Էգոյանը, որը նույնպես «Սիվիլիթաս» հիմնադրամի պատվո խորհրդի անդամ է, իր աջակցությունն է հայտնել Վարդան Օսկանյանին: Նա նշել է, որ ճանաչում է Օսկանյանին երկար տարիներ՝ փայլուն պետական գործիչ եւ Հայաստանի բարգավաճման եւ բարօրության նվիրյալ է անվանել նրան. «Հայաստանի գլխավոր դատախազին հորդորում եմ լրջորեն հաշվի առնել Վարդան Օսկանյանին անձեռնմխելիությունից զրկելու եւ շինծու մեղադրանքներով դատապարտելու հետեւանքները», գրել է նա:**

**Սեպտեմբերի 28-ին «Վաշինգտոն Պոստ» թերթում հոդված է հրապարակել Դեւիդ Իգնատիուսը, որ նշել է , որ Հայաստանի նախկին արտգործնախարարը մեղադրվում է «փողերի լվացման» գործով, քանի որ վերջինս նվիրատվություն է ընդունել Ջոն Հանթսմանից՝ ԱՄՆ նախկին նախագահի թեկնածուի հորից: Նա նշել է, որ Հայաստանի վերլուծաբանների համաձայն՝ գործի հիմքում քաղաքականությունն է: Պատմելով գործի պատմությունը՝ սյունակագիրը մի շարք մանրամասներ է ներկայացրել, թե ինչպես էր Հանթսման ավագը երկրաշարժի ժամանակ օգնել հայերին եւ Հայաստանին. «Երկու ականավոր եւ հարգանք վայելող գործիչներին՝ Օսկանյանին եւ Հանթսմանին հետապնդելու որոշումը վախեցնող է, քանի որ ցույց է տալիս, թե նախկին խորհրդային երկրներում իշխանությունները որքան հեռու կարող են գնալ, որպեսզի սահմանափակեն քաղաքական բանավեճը», եզրակացրել է «Վաշինգտոն պոստի» թղթակիցը:**

Ս. Խ.

# Ֆրանսիական մի նոր դավաճանությո՞ւն է նախապատրաստվում

ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ

Հայկական արվեստը դրական ազդեցություն է կրել ֆրանսիական արվեստից, հատկապես Արեւմուտքում: Հայերը գիտակցում են այդ փաստը եւ գնահատում այդ ազդեցությունը, որը բազում դարերի պատմություն ունի: Ներհատուկ կապ կամ ձգողական ուժ կարծես գոյություն ունի երկու ազգերի միջեւ այդ բնագավառում: Բայց երբ խոսքը քաղաքականության մասին է, այդ յուրահատուկ հարաբերությունները ի չիք են դառնում: Հայերը սխալմամբ հավատացել են, որ մշակութային այդ «մոտիկությունը» կարող է փոխարինվել քաղաքական պաշտպանությամբ կամ վերածվել քաղաքական համագործակցության, բայց նրանք քանիցս ցավալիորեն սխալվել են եւ հուսահատվել:

Հայ-ֆրանսիական հարաբերությունները հետ են գնում մինչեւ միջնադար, երբ ֆրանսիացի նվաճողները ներխուժեցին Մերձավոր Արեւելք խաչակիրների հետ՝ բռնի ուժով հետ խլելու Սուրբ երկիրը մահմեդականներից եւ հռչակելու քրիստոնեական տարածք: Կիլիկիայի հայկական իշխանությունները մասնակից դարձան եվրոպական այդ կայսերապաշտական ներխուժումներին, վերջին հաշվով ի վնաս իրենց, քանի որ երբ խաչակիրները ձախողվեցին եւ չքացան, հայերը կոտրած տաշտակի առաջ կանգնեցին պաշտպանելու իրենց թագավորությունը:

Երբ Եգիպտոսի մամլուքները ասպատակեցին Կիլիկիան 1375-ին եւ գերեվարեցին Լեւոն VI թագավորին՝ վերջ դնելով 300-ամյա թագավորությանը, ո՛չ խաչակիրները, ո՛չ էլ ֆրանսիացիները չեկան պաշտպանելու իրենց հայ դաշնակիցներին: Ճիշտ է, ֆրանսիացիները ուշացումով փրկագին վճարելով մամլուքներին՝ ազատեցին թագավորին եւ հյուրընկալեցին Ֆրանսիայում մինչեւ նրա կյանքի վերջը, բայց դա կատարեցին, որովհետեւ հավատացած էին, որ նա ֆրանսիացի Լուսինյանների տոհմից է:

Ամենախայտառակ դավաճանությունը, այդուհանդերձ, տեղի ունեցավ 20-րդ դարում, դարձյալ Կիլիկիայում: Առաջին համաշխարհային պատերազմի օրերին դաշնակիցները, հատկապես ֆրանսիացիները, հավաքագրեցին շուրջ 5000 հայ կամավորների, որպեսզի մաս կազմեն Արեւելյան լեգեոնին եւ կռվեն Արարայի (Պաղեստին) ամենաճակատագրական մարտերում: Փոխարենը նրանց խոստացել էին Կիլիկիայի ինքնիշխանություն Ֆրանսիայի հովանավորության ներքո: Բայց երբ օսմանյան բանակը ջախջախվեց, եւ Կիլիկիան ազատագրվեց, Ֆրանսիայի կառավարությունը հայ կամավորներին զինաթափ արեց եւ թիկունքից հարվածելով հայերին, Թուրքիայում նորահայտ քեմալական շարժման հետ համաձայնության գալով՝ 1921 թվի նոյեմբերին՝ բառացիորեն կեսգիշերին լքեց Կիլիկիան ու կիլիկիահայությանը եւ ստորաբար հեռացավ:

Երբ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին ֆրանսիական Սենատին ներկայացրեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեական հանցագործություն համարող օրինագիծը (գրեթե համազորը հրեական Գեյսո օրենքի), հայերը հույս ունեին, որ վերջապես ֆրանսիացիք ցանկանում են ուղղել իրենց սխալը՝ կիլիկիահայությանը լքելու իրենց դավաճանական քայլը, բայց պարզվեց, որ դա ընդամենը մի նոր խաբեություն էր: Սարկոզին դանդաղեց որոշումը ստորագրել եւ դրան օրենքի ուժ տալ, իսկ ընդդիմությունը, իր շարքերը ամրապնդելով, դիմեց Սահմանադրական դատարան, որն էլ իր հերթին աննպաստ որոշում կայացրեց: Սարկոզին, քաջ գիտակցելով նախապատրաստվող հարվածը, չօգտագործեց իր բացառիկ իրավունքները եւ դրանով փաստորեն ապացուցեց, որ ինքն էլ լրջորեն չէր հավատում իր խոսքերին:

Նրան հաջորդեց Ֆրանսուա Օլանդը: Հույսերը դարձյալ զարթնեցին, այս անգամ առավել մեծ հույսեր, քանի որ նա խոստացել է նախագիծը իրավաբանորեն այնպես ձեւակերպել, որ խոցելի տեղ չունենա:

Խոստումը դեռ ի զորու է, իհարկե, բայց չար լեզուներն ասում են, որ կմնա սոսկ նախընտրական խոստում եւ գործնականում դրանից այն կողմ չի գնա: Նախկինում մենք արդեն անդրադարձել ենք «Էքսպրես» ֆրանսիական պարբերաթերթին Լորան Ֆաբիուսի տված հարցազրույցին, որտեղ Ֆրանսիայի արտգործնախարարը նշում է, որ նորընտիր նախագահ Օլանդը ուղիներ է որոնում հավասարակշռելու իր քաղաքականությունն այնպես, որ ֆրանսահայ հզոր համայնքին տված խոստումը հանկարծ չվնասի Թուրքիային:

Տես էջ 3

ԹՄՄԻՈՒԹՅՈՒՆ

# «Օգնություն ուսուցչին» ծրագրի վերջին հանգրվանը՝ Բերձորում

Ամերիկայի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության ամենամյա «Օգնություն ուսուցչին» ծրագրի վերջին հանգրվանը Արցախի Բերձոր քաղաքն էր: Դպրոցի ուսուցչական եւ սպասարկող անձնակազմի անդամները իրենց շնորհակալությունն ու գոհունակությունը հայտնեցին սփյուռքահայ բարեկամներին իրենց հանդեպ ցուցաբերած ուշադրության, հոգատարության համար: «Երբ գնահատվում է աշխատանքդ, առանձնակի մի պատասխանատվությամբ ես նվիրվում գործին», ասում է Բերձորի թիվ 1 դպրոցի տնօրենուհի **Անահիտ Քյոսակյանը**, որը կենսաբանության եւ քիմիայի ուսուցչուհի է նաեւ:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, «Օգնություն ուսուցչին» ծրագրին իր մասնակցությունը ուներ Ալիս Մարաշլյանը (ԱՄՆ, Վաշինգտոն): Նա, լինելով Հայաստանի Վ. Թեքեյանի անունը կրող բոլոր հինգ դպրոցներում, նկատեց, որ հատկապես Բերձորի դպրոցը հիմնովին վերանորոգման խիստ կարիք ունի. «Եթե դպրոցի տանիքը հիմնովին նորոգվի, ապա հնարավոր կլինի աստիճանաբար նորոգել թե՛ դասասենյակները, թե՛ միջանցքները, թե՛ սանհանգույցն ու դպրոցի ճանապարհը, իսկ կահավորանքի հարցը ավելի հեշտությամբ կլուծվի»:

Այս տարի դպրոցի առաջին դասարանցիների թիվը հասնում է 25-ի, հիմնականում 90 տոկոս բնական աճի շնորհիվ, իսկ 10 տոկոս՝ վերաբնակվողների: Բերձորի վարչակազմի աշխատակիցը ասաց, որ հինգ սիրիահայ ընտանիք ապրում է Բերձորի հյուրատանը, որոնք ունեն դպրոցահասակ երեխաներ: Սիրիայում հայտնի դեպքերի հետեւանքով ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքում սիրիահայ մի քանի ընտանիքներ են ապրում, որոնց տրամադրվել են հողատարածքներ, նրանք հիմնականում զբաղվում են հացահատիկային կուլտուրաների մշակմամբ, ֆերմերային եւ գյուղատնտեսական այլ աշխատանքներով:

Ուրախալի էր իմանալ, որ մեր սիրիահայ հայրենակիցները իրենց ձեռքերով են պատրաստում գյուղատնտեսական մեխանիզացիան:

Քաշաթաղ հիմնադրամի միջոցներով հանգանակված գումարներով կառուցվում են կացարաններ (բազմաբնակարանային շենքեր) շուրջ 150 ընտանիքի վերաբնակեցման համար:

Բերձորի Վ. Թեքեյանի անվան դպրոցի ողջ ուսուցչական կոլեկտիվը եւ վարչակազմը շնորհակալություն են հայտնում ԹՄՄիությանը շարունակական հոգատարության համար:

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բերձոր-Շուշի-Ստեփանակերտ-Երեւան

# Ազգային հպարտության օ՛ր էր, անկասկած



Սեպտեմբեր 28, երեկոյեան Հարաւային Քընեթիքըթի Նահանգային համալսարանը ապրեցաւ հայկական օրեր: Աւելի քան 12 հազարնոց համալսարանի 53-ամեայ նորանշանակ նախագահուհիին՝ դոկտ. Մէյրի Փափազեանի ուխտառութեան օրն էր: Ան կը հանդիսանայ ամերիկահայ առաջին կին նախագահուհին ամերիկեան համալսարանի մը, այդ ալ Նիւ Ինկլընտի այլապէս հարուստ համալսարանական շրջանակէ մը ներս, ոչ այնքան հեռու Պոստոնէն ու Նիւ Եորքէն: Նիւ Հեվընի այս քաղաքի պարծանքը դարձող այս համալսարանը իր 120 տարիներու պատմութեամբ կ'ունենայ իր 11-րդ նախագահը:

Սրահը լեցուն է. նախ՝ 1500 է աւելի դասախօսներով, որոնք համապատասխան իրենց տարազներով կը գունաւորեն հսկայ դահլիճը: Անոնց մէջ են Երեւանի Խաչատուր Աբովեանի անուան պետական մանկավարժական համալսարանի ռեկտորը՝ դոկտ. Ռուբէն Միրզախանեան, Հայաստանի ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ Երուանդ Ազատեանը:

Ներկայ մեր հայրենակիցները եկած էին առաւելաբար Նիւ Եորքէն ու Նիւ Ճըրզիէն: Նախագահուհիին ամուսինը՝ դոկտ. Դենիս Փափազեան նախկին աւագ սպարապետն է Վարդանանց ասպետներու եղբայրակցութեան, որ հայրենասիրական իր աւանդոյթներով ունի մասնաւոր տեղ մը ամերիկահայ ազգային կեանքէն ներս:

Ամերիկայի Արեւելեան թեմի հայոց առաջնորդ Խաժակ արք. Պարսամեանի բացման աղօթքով սկսաւ օրուան տպաւորիչ հանդիսութիւնը:

Համալսարանի զանազան բաժանմունքներու, կրթական ու վարչական զանազան պատասխանատուներու, ինչպէս՝ նահանգի փոխկառավարիչ Նենսի Ուաեմընի, Էրըն ՄգԿուկընի խօսքերէն ետք բեմ հրաւիրուեցաւ դոկտ. Մէյրի Փափազեան, որ ա՛յնքան ինքնավստահ տուաւ իր նախագահական խօսքը: Ան, մանաւանդ շեշտեց Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը, հայերու տեղը հին ազգութիւններու շարքին եւ Նոյի հարազատներ որպէս Հայկական բարձրաւանդակէն նոր աշխարհ եկող որպէս առաջին ժողովուրդ կապեց համայն մարդկութիւնը Նոյի սերունդին: Տուաւ իր ծրագիրները համալսարանը բարձրակ ուսումնական հիմնարկի մը վերածելու եւ ամերիկեան կրթական մակարդակը իր աւանդոյթներուն վերադարձնելու ուղղութեամբ:

Մէյրին Լոս Անջելըսի կրթանուէր ու հայրենասէր տէր եւ տիկին Յակոբ Արշակունիներու զաւակը յաճախած է Ամերիկայի առաջին հայկական վարժարանը՝ Ֆերահեան: Այնուհետեւ որպէս կրթական մշակ եւ անգլիական գրականութեան մա՛նաւանդ 17-րդ դարու մասնագէտ, միացած է զանազան համալսարաններու, ինչպէս՝ Նիւ Եորք համալսարանի Լիմըն Քոլէճին:

Նախորդ օրը, կէսօրէ ետք, վարժարանի Ջոն Լայմըն կեդրոնի մէջ բացումը կատարուեցաւ հայկական կերպարուեստի ցուցահանդէսին, որ պիտի շարունակէ մեր ժամանակակից արուեստագէտներու գործերը ցուցադրել մինչեւ Հոկտեմբեր 21: Ցուցահանդէսին կազմակերպումը յանձնուած էր նիւ-ջըրզիաբնակ ծանօթ ազգային, կերպարուեստի գնահատող տիկին Շողակ Յովհաննէսեանին:

Անկասկած, ազգային հպարտութեան օր մը եղաւ: Հայեր շրջապատած իրենց սիրելի ազգակիցը՝ Մէյրին, լեցուն հայրենասիրութեամբ, ապրեցան օրուան խորհուրդը: Մինչ ի՛նքը՝ նախագահուհին, ամենայն համեստութեամբ ու սրտբաց ողջունեց իւրաքանչիւրը: Պատմական օր մըն էր ամերիկահայութեան համար: Առաջին անգամ ըլլալով հայուհի մը կը դառնար մեծ համալսարանի մը տնօրէնուհին:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ
Նիւ-Ջըրզի

# «Արարատբանկը» 5-րդ անգամ պարտատոմսեր թողարկեց

*40 հազար հատ՝ տարեկան 9 տոկոս շահութաբերությամբ*

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ֆոնդային բորսայում երեկ հայտարարվեց «Արարատբանկ» բաց բաժնետիրական ընկերության արժեկտրոնային պարտատոմսերի 5-րդ թողարկման մասին: Բացելով միջոցառումը՝ ֆոնդային բորսայի տնօրեն Կոնստանտին Սարոյանն ասաց, որ սա նոր էջ է Հայաստանի կապիտալի շուկայում, եւ այդ էջին առաջինը գրվելու է «Արարատբանկ» անունը: Նորն այն է, որ սա արժեկտրոնների առաջին հրապարակային բաշխումն է:

«Արարատբանկի» գործադիր տնօրենի տեղակալ Դավիթ Հարությունյանը հայտնեց, որ, հաշվի առնելով արտարժութային գործիքների նկատմամբ շուկայում առկա պահանջարկը, բանկն այս անգամ առաջարկում է դոլարային պարտատոմսեր: Այս անգամ թողարկվել են ոչ փաստաթղթային, արժեկտրոնային 40 հազար հատ պարտատոմսեր՝ 1 հատը 25 դոլար անվանական արժեքով, 9 տոկոս տարեկան տոկոսադրույքով եւ 36 ամիս շրջանառության ժամկետով: Տեղաբաշխումն իրականացվելու է հոկտեմբերի 5-ից՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ըստ Դավիթ Հարությունյանի, պարտատոմսը շրջանառության ընթացքում վաճառելիս կարելի է հետ ստանալ ոչ միայն ներդրած գումարը, այլ նաեւ կուտակված տոկոսագումարները:

Այնուհետեւ բանկի փոխտնօրենը անդրադարձավ «Արարատբանկի» այս տարվա առաջին կիսամյակի ցուցանիշներին: Այդ ընթացքում բանկի ակտիվներն ավելացել են 25 տոկոսով եւ կազմել 109,4 մլրդ դրամ, վարկային ներդրումներն աճել են 26 տոկոսով, փոքր եւ միջին ձեռնարկություններին տրվող վարկերը՝ 21 տկոսով եւ կազմել 13 մլրդ դրամ, ժամկետային ավանդներն ավելացել են 11,8 տոկոսով, իսկ բանկի շահույթը կազմել է 1 մլրդ 859 մլն դրամ:

Ա. Մ.

# Հանձնարարական՝ դպրոցներում ուսումնաօժանդակ նյութերի վաճառքը բացառելու վերաբերյալ

ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** հանձնարարական է ստորագրել՝ ուղղված ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ ՀՀ պետական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում աշխատանքային տետրերի, օրագրերի եւ այլ ուսումնաօժանդակ նյութերի վաճառքը բացառելու վերաբերյալ: Միաժամանակ, նախարարը համապատասխան գրություններով դիմել է նաեւ Երեւանի քաղաքապետին եւ ՀՀ մարզպետներին՝ նման հանձնարարականներ տալ իրենց ենթակայության ուսումնական հաստատությունների տնօրեններին:

Հանրապետությունում գործող 1396 դպրոցներից ՀՀ ԿԳՆ ենթակայության են ընդամենը 132 ուսումնական հաստատություններ:

ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ԱՄՆ

# Թուրքիայի հայ հերոսը

**Ոչ մամուլը, ոչ ռազմական պատմությունն ու գրականությունը Թուրքիայում առ այսօր տողով անգամ չեն հիշատակել այդ երկրի համար բազմաթիվ սխրանքներ գործած հայ զինվորական Սարգիս Թորոսյանի անունը: Արխիվային գրականության մեջ էլ ընդամենը ժլատ տեղեկություններ կան: Համենայն դեպս, շաբաթներ առաջ հրատարակված գրքի առաջաբանում այսպես է արտահայտվում թուրք պրոֆեսոր Այհան Աքդարը, որի նախաձեռնությամբ էլ իրականացվել է «Դարդանելից մինչեւ Պաղեստին» գրքի հրատարակումը:**



**Գիրքը ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի կողմից կռված այս հայ զինվորականի հուշերը:**

**1915 թվականի փետրվարից 18-ից մինչեւ 25-ը Սարգիս Թորոսյանը, որ թուրքական նավատորմում զինվորականի դեռ ընդամենը համեստ կոչում ուներ, ջրասույզ է անում անգլիական ու ֆրանսիական 2 ռազմանավեր: Մարտի 18-ին, մեծ ջարդից ընդամենը մեկ ամիս առաջ, նա գերագույն խիզախությամբ կործանում է երրորդ թշնամական ռազմանավը, երբ վերջինս փորձում էր անցնել Դարդանելը, եւ վերջնական հաղթանակ բերում թուրքական բանակին:**

**Հենց այդ մարտերից մեկի ընթացքում էլ ծանր վիրավորվում է:**

**Անօրինակ սխրագործությունների համար Սարգիս Թորոսյանին Էնվեր փաշան հարյուրապետի կոչում է շնորհում եւ կառավարական շքայլ պարգեւների արժանացնում: Օսմանյան կառավարությունը Սարգիս Թորոսյանին պարգեւատրում է նաեւ հատուկ շքանշանով՝ War Medal of the Imperial Ottoman government.**

**Սարգիս Թորոսյանը ավարտել է Պոլսո պատերազմական ակադեմիան: Հետագայում թուրքական ակառավարությունը խոստումնալից երիտասարդին ուղարկում է Գերմանիա, ուր հանրահայտ «Քրուպ» գործարանում նա խորամուխ է լինում թնդանոթների արտադրության ու գործարկման գաղտնիքներին:**



FROM DARDANELLES TO PALESTINE

*A true story of five battle fronts of Turkey and her allies and a harem romance.*

By

CAPTAIN SARKIS TOROSSIAN

Artillery Captain and observation officer in Turkish army; Commander, six thousand Arabian horsemen with Allies' army to Damascus; Chief de Platon, cavalry headquarters, Armenian Legion under French in Cilicia.

Introduction by

JOHN ARCHIBALD MacCALLUM

Illustrated with three maps and nineteen photographs by the author.

BOSTON
MEADOR PUBLISHING COMPANY
Publishers

**1915 թվականին կռվում է Սիրիա-պաղեստինյան հակամարտության ճակատում: Սիրիայում նա գտնում է թուրքական ջարդից մազապուրծ 12-ամյա քրոջը՝ Պայծառին: Երբ քույրը պատմում է, թե ինչպես են թուրքերը սպանել իրենց ծնողներին, հարյուրապետ զինվորականը խոր ցավի հետ նաեւ խոր հիասթափություն է ապրում եւ լքելով Թուրքիան, որի հպատակն էր, միանում է արաբներին եւ սկսում կռվել թուրքերի դեմ:**

**Այհան Աքդարը հետաքրքրական հարցադրում է անում՝ արդյոք թուրքերը պիտի պնդե՞ն, թե Սարգիս Թորոսյանն այն ժամանակ դավաճանել է Թուրքիային, արդյոք հակառակ պարագան չէ՝ թուրքերն են դավաճանել ու մեծ ցավ պատճառել իրենց հերոսին՝ սպանելով նրա ծնողներին, արտաքսելով ու ոչնչացնելով նրա ազգակիցներին:**

**Եվ դա հակառակ այն ժամանակ ընդունված պետական օրենքի, համաձայն որի թուրքական բանակում ծառայող հայերի ընտանիքները անձեռնմխելի էին մնալու, եւ պիտի պաշտպանվեին նաեւ ջարդերից ու արտաքսումներից:**

**1920 թվականին Սարգիս Թորոսյանը գաղթում է Ամերիկա, 1947-ին գրում է իր հուշերը, որոնք ընկնում են պրոֆեսորի ձեռքը, եւ նա նախաձեռնում է այս հրատարակությունը:**

ԴԻԱՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**
**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է՝ ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -7/12**

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի տանիքի հակասառեցման համակարգի աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ WWW. gnumner.am էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին՝ «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Զ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 06.10.2012 թվականի ժամը 11:00 (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Րաֆֆին մանդատը վայր է դրել, Քոքոբելյանը` ոչ

## «Ազատ դեմոկրատները» խախտել են պայմանավորվածությունը

**Պարզվում է` խորհրդարանական ընտրություններից հետո, երբ «Ժառանգություն»-«Ազատ դեմոկրատներ» դաշինքը հաղթահարեց հինգտոկոսանոց շեմն ու մտավ խորհրդարան, երկու կուսակցությունների ղեկավարները` Րաֆֆի Հովհաննիսյանն ու Խաչատուր Քոքոբելյանը, պայմանավորվածություն են ձեռք բերել, որ հրաժարվեն մանդատներից եւ ճանապարհ տան կուսակցական երիտասարդներին: Սակայն Քոքոբելյանը պայմանավորվածությունը խախտել է: Րաֆֆին մանդատը վայր դնելու որոշում է կայացրել, իսկ Քոքոբելյանը` ոչ: Այժմ Րաֆֆի Հովհաննիսյանը սպասում է գործընկերոջ բացատրություններին: Արտերկրում գտնվող Քոքոբելյանը ստիպված կլինի Երեւան վերդառնալով հանդիպել Հովհաննիսյանին ու հիմնավոր բացատրություններ տալ: Միայն դրանից հետո Րաֆֆին կհստակեցնի` առաջադրում է իր թեկնածությունը նախագահական ընտրություններին, թե՞ սատարում է մեկ ուրիշին: Թեպետ բացառված չէ հանդիպում ՀՅԴ եւ ԲՀԿ առաջնորդների հետ, սակայն այս պահին նման հանդիպում չի եղել: «Անկախ կուսակցական պատկանելությունից կամ հակումներից, Հայաստանը կարիք ունի նոր դե յուրե նախագահի: Ես ինքս ամեն ինչ անելու եմ իմ թեկնածության միջոցով կամ եթե դրանից ավելի լավ այլընտրանք կա, ուրիշին զորակցելով հասնել այն բանին, որ այս անգամ մեր ժողովուրդն ունենա համոզիչ, հաղթական այլընտրանք: Դրա համար ես ոչ թե վայր դրեցի իմ մանդատը, այլ չվերցրեցի»: Հովհաննիսյանը կողմ է, որ նոր հավաքական թեկնածուն նոր անուն կրի: Հենց դա է պատճառը, որ չառաջադրվելու դեպքում ո՛չ Սերժ Սարգսյանի, ո՛չ Գագիկ Ծառուկյանի թեկնածությունը չի պաշտպանի: «Հայաստանը նոր անվան է կարոտ»:**

**Հովհաննիսյանը «Սիվիլիթաս»-ի գործում Վարդան Օսկանյանին որպես մեղադրյալի ներգրավելու միջնորդության մեջ նախընտրական եւ քաղաքական շարժառիթներ է տեսնում: Իհարկե, Օսկանյանը մեղքեր ունի` Մադրիդյան սկզբունքները, մարտի 1-ին արված հայտարարությունն ու ցուցաբերած անտարբերությունը ժողովրդի հանդեպ, նաեւ Մեղրիի տարբերակն օրակարգ բերելը եւ դրանց համար պետք է նախկին արտգործնախարարին կանչել պատասխանատվության: Հովհաննիսյանի մեկնաբանությամբ` Օսկանյանը տվյալ միջնորդության հետ կապ չունի. ինչ վերաբերում է անձեռնմխելիությունից զրկելուն, ապա Հովհաննիսյանն առաջարկում է` որ ներկա եւ նախկին բոլոր նախագահները, վարչապետները, ԱԺ նախագահները եւ պատգամավորները իրենց աշխատակազմերով պատասխան տան կատարած մեղքերի համար: Այս ցուցակում, ըստ Հովհաննիսյանի, Օսկանյանը 100-րդ տեղում է, բայց նրա հարցն առաջինն է քննվում:**

Հ. Հ.




# Երեւանյան երկնակամարում. ՎիվաՍել-ՄՏՍ-ն հովանավորեց Red Bull X Fighters Jams մոտոմրցույթը

ՎիվաՍել-ՄՏՍ-ն` «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, դարձավ աշխարհում հայտնի մարզիկների մասնակցությամբ Երեւանում` Հանրապետության հրապարակում անցկացված այս տարվա ամենադիտարժան իրադարձության` Red Bull X Fighters Jams մոտոմրցույթի գլխավոր հովանավորը:




X Fighters Jams մոտոմրցույթը, որն առ այսօր էքստրեմալ սպորտաձեւերի սիրահար հայաստանցի հանդիսատեսին հասանելի է եղել միայն հեռուստատեսությամբ, կազմակերպվել էր ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր հովանավորությամբ եւ ուղիղ հեռարձակվել ՎիվաՍել-ՄՏՍ-ի առցանց տեսաալիքով:

Աշխեցուցիչ հնարքներով հարուստ շոուին մասնակցեցին այս սպորտաձեւում համաշխարհային համբավ վայելող մարզիկներ Ալեքսեյ Կոլեսնիկովը (Ռուսաստան), Դանիել Բոդինը (Շվեդիա), Կիրիլ Գավրիլովը (Ռուսաստան) եւ Ալեքսեյ Այսինը (Ռուսաստան):

Մարզիկների հնարքներն անցկացվեցին երեք մետր բարձրությամբ հատուկ ցատկահարթակի վրա: Մոտոէքստրեմալները ցուցադրեցին իրենց անհավանական հնարքները գետնից ավելի քան 10 մետր բարձրության վրա` միաժամանակ բացարձակ ճշգրտությամբ կառավարելով 100 կգ քաշ ունեցող մոտոցիկլետը:

Ռուսաստանում FMX-ի հիմնադիրը 28-ամյա մարզիկ Ալեքսեյ Կոլեսնիկովն է, որն առաջինը Ռուսաստանում կատարել է backflip հնարքը: Այսօր Ալեքսեյ Կոլեսնիկովը կամ «Կալաշնիկովը», ինչպես նրան գործընկերներն են կոչում, աշխարհի լավագույն քսան մարզիկներից մեկն է:

# Արցախում ռոումինգում գտնվելիս` զանգահարեք տեղական սակագներով

ՎիվաՍել-ՄՏՍ-ն` «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ այսուհետեւ Արցախում ռոումինգում գտնվելիս` դեպի Հայաստանի Հանրապետություն զանգահարելիս զանգի մեկ րոպեի արժեքը կկազմի 45 դրամ` նախկին 140 դրամի փոխարեն:

Տեղական ուղղություններով զանգահարելիս եւս զանգի մեկ րոպեի արժեքը կկազմի 45 դրամ` նախկին 80 դրամի փոխարեն:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:



# Ֆրանսիական մի նոր դավաճանությո՞ւն է նախապատրաստվում

1-ին էջից

Այս օրերին Օլանդն ու վարչապետ Էրոն ամբողջ երկրով մեկ նոր թանգարաններ ու հուշարձաններ են հանդիսավորապես բացում: Սեպտեմբերի 21-ին Օլանդը Դյուրանսում էր, Փարիզի հյուսիսում, որը ժամանակին տարանցիկ գլխավոր ճամբարի տեղանքն էր եղել դեպի մահ առաջնորդվող հրեա տարագիրների համար: «Մեր գործն այլեւս ճշմարտությունը հաստատելը չէ, այլ դրա փոխանցումը (հետագա սերունդներին): Սա է այս հուշակոթողի ոգին: Այդ փոխանցման մեջ է կայանում հիշողության ապագան», ասել էր նա:

Փարիզի կենտրոնում Հոլոքոսթի հսկա մի թանգարան բացվել էր 2005-ին: Մի նոր հուշակոթող բացվում է ներկայիս «Սիթե դը լա Մուեթ-ի» կենտրոնում: Իսկ անցյալ ամիս վարչապետ Ժան-Մարի Էրոն նման մի հուշարձանի բացումը կատարեց Էքս-ան-Պրովենսում:

Այս բոլոր միջոցառումները ցույց են տալիս, որ Ֆրանսիայի նոր նախագահն ու իր կառավարությունը շատ զգայուն են մարդկային տառապանքների եւ գազանային իշխանավորների կազմակերպած գործողությունների միջոցով մարդկային կորուստների հանդեպ: Միայն թե մնում է տեսնել, թե արդյո՞ք հայկական կորուստներն էլ պատկանում են այդ մարդկային տառապանքների թվին: Մարդկային կյանքի արժանապատվությունը պաշտպանելու հարցում նախագահ Օլանդն ավելի առաջ գնաց իր նախորդներից: Նախկին նախագահներից Ֆրանսուա Միտերանը ընդունել էր, որ Ֆրանսիան Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ընդհանուր դերակատարություն ունեցել էր հրեաներին կալանավորելու եւ տարագրելու հարցերում: Նախագահ Ժակ Շիրակը մի քայլ առաջ գնալով` 1995-ին ընդունել էր տեղի ունեցած «հավաքական անօրինակությունները»: Իսկ Օլանդը, էլ ավելի հանդուգն գտնվելով, կատարվածը կոչել է «հանցագործություն»:

Ֆրանսիացիներից շատերը այդ հանցագործությունը վերագրում են մարշալ Պետենին, որի կառավարությունը Վիշիում համագործակցել էր նացիստական զավթիչ ուժերի հետ: (Ի դեպ, որոշ ֆրանսահայեր Վիշիի կառավարության եւ նացիստների դեմ պայքարող ընդհատակյա ֆրանսիական կազմակերպության առաջնորդներն էին կամ անվեհեր անդամները: Նրանցից ամենահայտնին, անշուշտ, Միսակ Մանուշյանն է):

Բացի Ֆրանսիայում զոհված հրեաների հիշատակը հարգելուց` Օլանդը նաեւ բարոյական խիզախություն ցուցաբերեց` անցյալ օգոստոսին «Պատվո լեգեոն» շքանշանից զրկելու հայտնի մոդելագործ, Դիորի նախկին տնօրեն, բրիտանացի Ջոն Գալիանոյին, որը հակասեմական արտահայտություններ թույլ տալու համար 2011-ին մեղավոր էր ճանաչվել: Գալիանոն այդ շքանշանին արժանացել էր 2009-ին:

Բոլոր այս գործողությունները ցույց են տալիս, որ մենք գործ ունենք կայուն բարոյական սկզբունքների տեր մի պետական գործչի հետ: Մնում է միայն պարզել, թե այդ սկզբունքները գործում են բոլորի՞, թե՞ որոշակի խմբավորումների համար:

Վերջերս Փարիզում կայացած քննարկումներ կասկածի տեղիք են տալիս, որ դրանք կարող են «ազդվել» քաղաքական նկատառումներից: «Բոսֆորի» համալսարանի կազմակերպած կլոր սեղանը Փարիզում պետք է քննարկեր Հայոց ցեղասպանության ուրացումը քրեականացնող ֆրանսիական օրինագիծը: Մասնակիցների թվում էին Ֆրանսիայի խորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Էլիզաբեթ Գիգուն, մշակույթի նախկին նախարար Ժակ Լանգը եւ Թուրքիայի նախկին արտգործնախարար Յաշար Յաքըշը:

Որեւէ սիմպոզիումի կամ կլոր սեղանի քննարկումները սովորաբար ակադեմիական դատողությունների մակարդակով են անցնում: Բայց երբ մասնակիցները գործող օրենսդիրներ են կամ նախկին պետական գործիչներ, ձեւաչափը փոխվում է, եւ լուրջ քաղաքական «ճյուղավորում» է ստանում: Միջոցառմանը Գիգուն, պատճառաբանելով, թե Սահմանադրական դատարանը ապօրինի է ճանաչել ցեղասպանության ուրացումը քրեականացնող օրինագիծը, անհավանական է համարել նոր օրինագծի պատրաստումը, չնայած նախագահ Օլանդը չափազանց զգայուն է օրինագծում բարձրացված հարցի նկատմամբ: Պրն Լանգը կրկնել է նույն միտքը: Թուրք ներկայացուցիչը նախ զգուշացրել է, որ դրանով կխաթարվեն թուրք-ֆրանսիական հարաբերությունները, այնուհետեւ մեծահոգաբար ավելացրել, որ կխաթարվեն ոչ միայն թուրք-ֆրանսիական, այլեւ հայ-թուրքական հարաբերությունները:

Անդրադառնալով կլոր սեղանի այս քննարկումներին «**Ազգ**» թերթում` թուրքագետ **Հակոբ Չաքրյանը** եզրակացնում է. «Օրինագիծը գուցե վնասի թուրք-ֆրանսիական հարաբերություններին, սակայն հայ-թուրքականին վնասել չի կարող, որովհետեւ չկան այդպիսի հարաբերություններ»:

Նախագահ Օլանդը դեռ չի ասել իր վերջնական խոսքը ցեղասպանության օրինագծի վերաբերյալ, սակայն վերոնշյալ հայտարարություններն ու զարգացումները լավ բան չեն խոստանում նման օրինագծի անցկացման համար:

Եթե Ֆրանսիայում Հոլոքոսթը ժխտելը կամ ուրանալը հանցագործություն է, ապա միեւնույն տրամաբանությամբ պետք է հանցագործություն համարել նաեւ Հայոց ցեղասպանությունը ուրանալը: Միայն քաղաքական նպատակահարմարությունը կարող է շեղել բանաձեւը օրենք դարձնելու բնականոն եւ օրինական գործընթացը: Եվ միայն ժամանակը ցույց է տալու, թե ինչքան տոկուն են Ֆրանսուա Օլանդի բարոյական սկզբունքները:

Գուցե ճիշտ չէ վաղաժամ եզրակացությունների հանգելը, սակայն բոլոր նշաններն առկա են, որ ֆրանսիական մի նոր դավաճանություն է նախապատրաստվում:

**Դետրոյթ, ԱՄՆ**

**Թարգմ.` Հ. Ծ.**

## Տարաբնույթ

# Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի ծննդյան 125-ամյակի առթիվ

## *Հայ նոր պատմագիտության երախտավորը*

XX դարի հայ նշանավոր հասարակական քաղաքական գործիչ եւ պատմաբան Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանի կյանքը հետաքրքրական եւ ուսանելի է շատ կողմերով՝ ե՛ւ որպես ազգային գործչի, ե՛ւ որպես պատմաբանի:

Ծնվել է 1887թ. հունիսի 17-ին Շուշիում, մահացել 1972թ. հունիսի 30-ին Երեւանում, 85 տարեկան հասակում:

Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի ռեալական վարժարանում: 1906թ. սեպտեմբերին մեկնում է Գերմանիա եւ ընդունվում Եենայի համալսարանի փիլիսոփայության բաժինը: Համալսարանի ուսումնառության տարիներին ունկնդրել է ժամանակի նշանավոր գիտնականներ Ռուդոլֆ Էյկենին, Օտտո Լիբմանին, Էռնստ Հեկկելին եւ այլ ճանաչված հեղինակությունների: Գերմանիայի համալսարաններում ընդունված կարգի համաձայն, նա սովորում է ոչ թե մեկ, այլ մի քանի համալսարաններում: Եենայից հետո նա ուսումնառությունը շարունակում է Հալլեի համալսարանի տնտեսագիտության եւ Մյունխենի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետներում: Նա բուռն մասնակցություն է ունենում ուսանողական միությունների աշխատանքներին: 1906թ. վերջերին անդամակցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության արտասահմանյան կազմակերպությանը:

Հայ պատմագիտության մեջ լուրջ խոսք ասելու իր անդրանիկ հայտը Աշոտ Հովհաննիսյանը ներկայացնում է 1913թ. Մյունխենում հրատարակելով «Իսրայել Օրին եւ հայ ազատագրական գաղափարը» աշխատությունը, որը պաշտպանում է որպես դոկտորական ատենախոսություն եւ ստանում փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան:

Գերմանիայում ուսումնառությունն ավարտելուց հետո նա վերադառնում է հայրենիք եւ 1913-1914թթ. աշխատում Շուշիի սեմինարիայում որպես գերմաներենի եւ ընդհանուր պատմության առարկաների ուսուցիչ: Ամենայն հայոց կաթողիկոսի Գեւորգ Ե Սուրենյանցի առաջարկությամբ նա 1914թ. սեպտեմբերին տեղափոխվում է Վաղարշապատ եւ նշանակվում Գեւորգյան Ճեմարանի քաղաքագիտության, լատիներենի, գերմաներենի եւ ընդհանուր պատմության առարկաների դասախոս: Ճեմարանի ուսումնասեր միջավայրը բարենպաստում է Աշոտ Հովհաննիսյանի գիտական հետաքրքրություններին նոր խթան ներարկելու համար: Դասախոսություններից ազատ ժամերին աշխատում է Մայր աթոռի հարուստ գրադարանում եւ ձեռագրապահոցում, ուսումնասիրում վավերագրերի եւ փաստաթղթերի եզակի հավաքածուները: Իր ուսումնասիրությունների արդյունքները նա տպագրում է «Արարատ» ամսագրի էջերում եւ առանձին գրքույկներում, որոնցում ներառվում էին գլխավորապես միջնադարի հայ ազատագրական պայքարի եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունը: Նրա այդ հրապարակումները աչքի էին ընկնում ոչ միայն ասելիքի թարմությամբ, այլեւ ուղենշում հայ նոր պատմագիտության առաջընթացի ուղեգծեր:

1917թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Գեւորգյան ճեմարանը դադարեցնում է իր գործունեությունը: 1917թ. հուլիսին Աշոտ Հովհաննիսյանը վերադառնում է Շուշի, ուր խմբագրում է «Նեցուկ» թերթը, որի էջերում տպագրած հրապարակախոսական հոդվածներում պաշտպանում է սոցիալիստական հեղափոխություն իրագործելու ծրագիրը: Ստ.Շահումյանի հրավերով նա 1917թ. վերջերին տեղափոխվում է Բաքու, գործուն մասնակցություն ունենում Բաքվի խորհրդային իշխանության (Կոմունայի) աշխատանքներին: Նշանավոր հեղափոխական Նադեժդա Կոլեսնիկովայի հետ գլխավորում է Բաքվի խորհրդի ժողովրդական կրթության բաժինը, խմբագրում «Բանվորի խոսք» թերթը: Բաքվի կոմունայի անկումից հետո, Աշոտ Հովհաննիսյանը Աստրախանում խմբագրում է «Կարմիր բանվոր» թերթը եւ քաղաքական աշխատանք կատարում «Իվան Կոլեսինկով» շոգենավի կոլեկտիվում: Այնուհետեւ տեղափոխվում է Մոսկվա, որտեղ աշխատանքի է անցնում ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի հայկական գործերի կոմիսարիատում՝ գլխավորում գրական-հրատարակչական բաժինը: Մեկ տարի անց փոխադրվում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ՝ հայկական բաժնի վարիչի պաշտոնով: Լուսժողկոմատի կողմից 1920թ. գարնանը գործուղվում է Դոնի Ռոստով, որտեղ խմբագրում է «Բանվորի կռիվ» թերթը եւ քաղաքական աշխատանք կատարում հայ բնակչության շրջանում:

Բորիս Լեգրանի գլխավորած ՌՍՖՍՀ-ի դիվանագիտական միսիայի կազմում (որպես միսիայի անդամ) 1920թ. օգոստոսին Հովհաննիսյանը ժամանում է Երեւան, մասնակցում Հայաստանի Հանրապետության հետ տարվող բանակցություններին:

Հայաստանի խորհրդային կառավարության կազմում Հովհաննիսյանը զբաղեցնում է Լուսավորության ժողովրդական կոմիսարի պաշտոնը: Նա է ստորագրել հայոց լեզուն հանրապետությունում պետական ճանաչելու, անգրագիտությունը վերացնելու, պետական հրատարակություն կազմակերպելու, կուլտուր-լուսավորական ինստիտուտի ստեղծման, Երեւանի հեղափոխական թանգարանի հիմնադրման եւ այլ դեկրետներ: Նրա եւ Ալ. Մյասնիկյանի անմիջական ջանքերի շնորհիվ է, որ Խորհրդային Հայաստան են վերադառնում գիտության, մշակույթի, գրականության բազմաթիվ անվանի դեմքեր: 1922թ. հունվարի վերջին տեղի ունեցած Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարում կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար է ընտրվում Աշոտ Հովհաննիսյանը, որը գրեթե 7 տարի, մինչեւ 1927թ. օգոստոսը զբաղեցնելով այդ պոստը, վիթխարի գործ է կատարում հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի վերակառուցման բնագավառում: Առաջին քարտուղարի պաշտոնում նա աշխատեց բոլորանվեր, սակայն հատկապես 1926-1927թթ. զգում էր, որ ամբողջ երկրի կառավարման համակարգում սրընթաց աճում է վարչահրամայական մեթոդը, մեթոդ, որի բացահայտ թշնամին էր ինքը: Նման կացության պայմաններում նա որոշում է ընտրել հակամարտության լուծման «խաղաղ» ճանապարհ. ազատվում է զբաղեցրած պաշտոնից եւ տեղափոխվում Լենինգրադ, ուր Մ. Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում մեկ տարի աշխատելուց հետո հրավիրվում է Մոսկվա: Մի շարք գիտամշակութային կազմակերպություններում աշխատելուց հետո, վերջում՝ 1935-1937թթ. նա զբաղեցնում է ԽՍՀՄ պատմության ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը: Ասում ենք վերջում, որովհետեւ 1937թ. հուլիսին հեռացվում է զբաղեցրած պաշտոնից եւ անհիմն մեղադրանքով ձերբակալվում:

Մոսկվայում եւ Երեւանում խորհրդային բանտի «բարիքները» լիովին ճաշակելուց հետո Աշ. Հովհաննիսյանն աքսորվում է Կոմի Ինքնավար Հանրապետությունում գտնվող Գուլագի ճամբարներից մեկը, իսկ այնտեղից էլ՝ Տաշքենդի մարզի Յանգիյուլ քաղաքը: 1943թ. նա թույլտվություն է ստանում վերադառնալ Խորհրդային Հայաստան՝ սակայն Երեւանում չապրելու պայմանով: Թույլատրելով բնակվել Կիրովականում (Վանաձոր), իշխանությունները նրան իրավունք են տալիս պայմանագրային հիմունքներով աշխատելու գիտությունների ակադեմիայի պատմության եւ գրականության ինստիտուտներում (1943-1954թթ.):

Աշոտ Հովհաննիսյանը հնարավորություն ստացավ իրեն լիովին նվիրելու գիտությանը 1954 թվականից հետո միայն, երբ աշխատանքի է անցնում ԳԱ պատմության ինստիտուտում, նախ՝ որպես ավագ գիտական աշխատող, իսկ 1961 թվականից ղեկավարում է նույն ինստիտուտի նոր պատմության բաժինը: Նա 1955թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, իսկ 1960թ. ընտրվում է ՀԳԱ ակադեմիկոս: Նրան գիտության վաստակավոր գործչի կոչում է շնորհվում 1961 թվականին:

Բանտից եւ աքսորից հետո ընկած ժամանակաշրջանը, անհատի պաշտամունքի դատապարտումը արարման բախտորոշ նշանակություն ունեցավ գիտնականի համար:

Ստալինյան բռնապետությանը հաջորդած «ձնհալի» ժամանակաշրջանում նա ջանաց կատարել Հայաստանի պատմության շրջադարձային հարցերի խոհիմաստասիրական նոր ընդհանրացումներ: Հայացքն հառած միջին ու նոր դարերի հայ ազատագրական մտքի բեկումներին, ամուր գամված ազատասիրության գաղափարին, արմատները ձգած հայ մշակութային շերտերի ընդերքը՝ նա հայագիտության պահեստապաշարը հարստացրեց «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» (երկհատոր), «Նալբանդյանը եւ նրա ժամանակը» (երկհատոր) մենագրություններով, տասնյակ հիմնահարցային՝ գիտության առաջընթացին միտված ուղեցույցային հոդվածներով: Անգնահատելի է Աշոտ Հովհաննիսյանի աշխատությունների գիտական արժեքը հայագիտության, մասնավորապես ազատագրական մտքի եւ շարժման ուսումնասիրության ասպարեզում: Նրա «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր գիրքը, որպես գիտահետազոտություն, ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը համարում է հայ մատենագիտության պատմության եզակի երեւույթներից մեկը, որը գիտական նոր բարձունքի վրա դրեց հայ տեսական-պատմագիտական միտքը: Աշոտ Հովհաննիսյանը դրանով իր տեղը վավերացրեց հայագիտության դասականների շարքում: Կեսդարյա խորհրդային բռնապետության (գրեթե 20-ամյա ընդհատումով) գիտական գործունեության ընթացքում Աշոտ Հովհաննիսյանը հրապարակել է ավելի քան 120 ուսումնասիրություններ, որոնցից շատերը իրենց նշանակությամբ մշտամնա տեղ են զբաղեցնում հայոց դարավոր պատմագիտության մեջ:

**ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ**
**Պատմագիտության դոկտոր**

# Ազատեք մեզ այդ արատավոր «ղեկավարից»

## *Երկրի նախագահին բաց նամակում խնդրում են սննդամթերքի անվտանգության ծառայության Գյումրիի կենտրոնի աշխատակիցները*

***Սննդամթերքի անվտանգության ծառայության նախկին եւ դեռես գործող աշխատակիցներս դիմում ենք Ձեզ, պարոն նախագահ, Ձեր ուշադրությունը հրավիրելով ծառայության Գյումրիի կենտրոնում ստեղծված իրավիճակի վրա:***

Երբ ծառայության պետ նշանակվեց Աբրամ Բախչագուլյանը, Գյումրիի կենտրոնում նույնպես տեղի ունեցավ այն, ինչ ծառայության մյուս ստորաբաժանումներում: Մասնավորապես հեռացվեցին կամ ազատման դիմում գրելու պարտադրանքի առաջեւ կանգնեցին մասնագետները: Նրանց փոխարինեցին մարդիկ Բախչագուլյանի շրջապատից, որոնք մարդու առողջության եւ կյանքի համար այս կարեւորագույն ոլորտի մասնագետներ չեն:

Սակայն նախ 2010-ին վերացվեց Գյումրու կենտրոնի պետի հաստիքը, ապա սույն թվականի հունվարին վերականգնվեց՝ Բախչագուլյանը կենտրոնի պետ նշանակեց իր համախոհ Համբարձում Մաթեւոսյանին, որը սկսեց ահաբեկել եւ հետապնդել, որպեսզի ազատվի գիտակ մարդկանցից: Նշանակվելով այս պաշտոնում, նա անմիջապես գործի անցավ՝ սեփական բիզնեսների համար բարենպաստ դաշտ ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես, մթերային խանութների սեփականատերերից Համբարձում Մաթեւոսյանը պահանջել է իրացնել միայն իր թռչնանոցի արտադրած ձուն եւ հացի արտադրամասի հացամթերքը: Նրա որդին ծառայությանը պատկանող պետական մեքենայով՝ դեղին «Նիվա», սեփական ապրանքը հասցնում է առեւտրի կետերին: Ծառայության Գյումրիի կենտրոնի տնօրենը մի քանի օր առաջ ստեղծել է «Փորձաքննություն» ՍՊԸ-ն, ոմն Յուրա Գրիգորյանի անվան տակ, որը չունի ոչ գործունեության լիցենզիա, ոչ լաբորատորիա, բայց տալիս է փորձագիտական եզրակացության մսի վաճառքի թույլտվությունը: Մինչ այդ նման եզրակացություն կարող էր տալ «Դոսի» ՍՊԸ-ն, որը ուներ եւ լիցենզիա, եւ լաբորատորիա, որին փաստորեն թույլ չտրվեց շարունակել գործունեությունը: Մաթեւոսյանի կամակատար Գնել Մանուկյանը, ահաբեկելով տնտեսվարողներին, ստիպում է պայմանագիր կնքել միայն «Փորձաքննություն» ՍՊԸ-ի հետ:

Ինչ վերաբերում է մասնագետներին, ապա կենտրոնի նախկին պետ մասնագիտությամբ կենսաքիմիկոս եւ անասնաբույժ-փորձագետ գլխավոր մասնագետ-տեսուչ Անուշ Մնացականյանի նկատմամբ ծառայողական քննություն սկսելու հրահանգ էր տրվել այն դեպքում, երբ վերջինս ավելի քան 1,5 ամիս բյուլետենի մեջ գտնվելուց հետո եկել էր աշխատանքի: Անուշ Մնացականյանը, չդիմանալով անառողջ մթնոլորտին եւ հոգեբանական ճնշումներին, աշխատանքից ազատվելու դիմում է գրել:

Ծառայողական քննություն սկսելու մեկ այլ հրահանգ էլ Համբարձում Մաթեւոսյանը տվել է վիրահատվելուց հետո նոր աշխատանքի եկած մեկ այլ գլխավոր մասնագետ-տեսուչի՝ Իվետա Չարխիֆալաքյանի նկատմամբ:

Շիրակի մարզի հակահամաճարակային ախտորոշիչ կենտրոնի տնօրեն Վարդան Պատոյանն արդեն հասցրել է խիստ նկատողություն ստանալ, ինչը նրանից ազատվելու Մաթեւոսյանի մտադրության մասին է վկայում: Քանի որ նրա տեղը ուզում է խցկել իր մտերիմ Աղաբեկ Սարգսյանին: Նույնպիսի հետապնդումներ են կատարվում նաեւ անասնաբույժ Լեւոն Գեւորգյանի նկատմամբ: Ի դեպ, Մաթեւոսյանի նկարագիրը հայտնի է Ախուրյանի շրջխորհրդում աշխատած ժամանակ:

Պրն նախագահ, ներկայացնելով այս փաստերը, խնդրում ենք Ձեզ Շիրակի մարզի բնակչությանը եւ կենտրոնի աշխատակիցներին ազատել այդ արատավոր «ղեկավարից»:

*Դիմում ենք հույսով՝*

**Անուշ Մնացականյան,**
**Իվետա Չարխիֆալաքյան,**
**Վարդան Պատոյան,**
**Լեւոն Գեւորգյան**
**(ստորագրություններ)**

***Խմբ. կողմից*** *- Ի դեպ, սննդամթերքի անվտանգության ծառայության ղեկավար Աբրամ Բախչագուլյանի գործունեության եւ այս կառույցում ստեղծված մթնոլորտի մասին անդրադարձել ենք մեր թերթի սեպտեմբերի 19-ի համարում՝ «Սննդամթերքի անվտանգություն՝ ում է վստահված մեր առողջությունը» հրապարակման մեջ: Ինչին ի պատասխան, մեր թերթի կայքում ինչ-որ անգրագետ մեզ մեղադրեց «ստահոտ» տեղեկություններ հաղորդելու մեջ:*

# Վճարիր երեք միլիարդ դոլար եւ գնիր մարդասպանին

***Այս օրերին միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է հունգարական իշխանությունների կողմից ադրբեջանցի մարդասպան Ռամիլ Սաֆարովին Բաքվին հանձնելու աղմկարար սկանդալը: Այդ մասին է սերբական «Պեչաթ» անկախ ամսագրի սեպտեմբերի 21-ի համարում լույս տեսած Վլաստիմիր Վույիչի հրապարակումը, որ թարգմանաբար ներկայացնում ենք:***

Իշխող հունգարական Ֆիդես աջակողմյան քաղաքական կուսակցությունը եւ վարչապետ Վիկտոր Օրբանը Հունգարիային եւ աշխարհին համարյա ամեն օր առանց բացառության նոր սկանդալների առաջ են կանգնեցնում: Հիշյալ սկանդալներից ամենավերջինը տեղի ունեցավ օգոստոսի 31-ին: Այդ օրը Բուդապեշտը Բաքվին հանձնեց 2006-ին դատապարտված 35-ամյա ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովին, որը 2004-ի փետրվարի 19-ին դաժանորեն կացնահարել ու գլխատել էր հայազգի սպա Գուրգեն Մարգարյանին, ինչպես նաեւ սպանության փորձ արել սպանվածի հայրենակից Հայկ Մուկուչյանի հանդեպ: Երեքն էլ մասնակցում էին ՆԱՏՕ-ի շրջանակներում` Հունգարիայում անցկացվող դասընթացներին: Ղարաբաղյան մարտերին մասնակցած Սաֆարովը, չկարողանալով հաշվել կռիվներում Ադրբեջանի հանդեպ հայ սպայի հաղթանակին, կացին է ձեռք բերել եւ քնած հարեւան սենյակը դաժանորեն կացնահարել է քնած Գուրգեն Մարգարյանին: Մյուս հայի վրա հարձակվելով վնասել է կուրծքն ու կոնքոսկրը: Դատաքննության ժամանակ, որպես ավարտի խոսք, հայտարարել է, թե ամենեւին չի զղջում իր արածի համար:

Մեկ օր անց` սեպտեմբերի 1-ին, Բաքու վերադառնալուց հետո, համաձայն 1983 թ. եվրոպական համաձայնագրի, ըստ որի դատապարտված անձը պիտի շարունակի կրել իր պատիժը արտաքսվող երկրում, Սաֆարովը ոչ միայն չհայտնվեց բանտում, այլեւ իսկույն դրան հաջորդեցին մարդասպանին ներում շնորհելու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, նրան բնակարան շնորհելու եւ մայորի կոչում տալու պաշտպանության նախարարության հրամանները: Նույն օրը Սաֆարովը այցելել է քաղաքային հուշահամալիր եւ ծաղկեպսակ դրել երեք զինվորների հուշարձանին, իսկ բաքվեցիները հերոսաբար բարձրաձայնել են նրա անունը` դիմավորելով բուռն ծափերով:

Ի պատասխան Սաֆարովի ազատման հաջորդեց Հայաստանի Հանրապետության նախագահ Սարգսյանի հայտարարությունը, համաձայն որի, իր երկիրը խզում է դիվանագիտական հարաբերությունները եւ պաշտոնական բոլոր կապերը Հունգարիայի հետ: Գուրգեն Մարգարյանին սպանած ու դատապարտված մարդասպան Սաֆարովին Ադրբեջանին հանձնելու պաշտոնական Բուդապեշտի որոշմանը հաջորդեց ավելի քան հազար հայերի վրդովված ցույցը Երեւանում Հունգարիայի հյուպատոսության առջեւ: Չնայած ոստիկանների ներկայությանը` ցուցարարները հյուպատոսության շենքից վայր են գցել ու այրել հունգարական դրոշը, իսկ հյուպատոսության շենքին ձվեր ու լոլիկներ են շպրտել` մեղադրելով Բուդապեշտին Բաքվի հետ ֆինանսական գործարք իրականացնելու համար: Այնուհետեւ հյուպատոսության պատին այսպիսի գրություն են թողել. «Վճարիր երեք միլիարդ դոլար եւ գնիր մարդասպանին: Հունգարիան վաճառեց իր հոգին»:

Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը նշել է, որ հունգարների այս քայլը Օրբանի կառավարության շարունակական երեսպաշտության մի դրսեւորում է: Հունգարիան մի կողմից հաստատակամորեն իրեն ներկայացնում է որպես եվրոպական արժեքներ կրող, իսկ մյուս կողմից ոչ միայն շրջանցում է արդարությունը, այլեւ առուծախի առարկա է դարձնում այն,- նշում են հայ սոցիալ-դեմոկրատները: Նույն կերպ իրենց վերաբերմունքն են արտահայտել Հայաստանի սփյուռքի նախարարությունը, Ամերիկայի հայ ազգային համագումարը եւ Հայաստանի արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը, ով վարչապետ Օրբանից հետո` Սաֆարովին Ադրբեջանին հանձնելու սկանդալային նման վճիռ կայացնելու համար պատասխանատու է համարում իր հունգար գործընկեր Տիբոր Նավրաչիչին, ով պարտավոր էր իմանալ, որ մարդասպանին իր երկրին հանձնելուն հաջորդելու է նման սցենարը: Բողոքի ցույցերով հանդես են եկել նաեւ Հունգարիայում ապրող հայ ազգային փոքրամասնության ներկայացուցիչները, իսկ Հունգարիայի խորհրդարանի ընդդիմադիր բոլոր կուսակցությունների եւ քաղաքացիական կազմակերպությունների ու միությունների` Երեւանին ուղղված նամակը պայմանավորված է եղել Սաֆարովին Ադրբեջանին հանձնելու առնչությամբ մի քանի հազար ցուցարարների բողոքով, ուր ասվում է. «Հայ ժողովրդից ու ամբողջ աշխարհից ներողություն ենք հայցում»:


Тајни јунски преговори Орбана и Алијева у Азербејџану

Рамил Сафаров, убица са секиром, у Бакуу је дочекан као херој (слика десно)

„Плати три милијарде долара – и купи убицу“

До сада највећи дипломатски **скандал друге владе Виктора Орбана и Фидеса** – Будимпешта је Бакуу испоручила Рамила Сахиба Сафарова, осуђеног 2006. године због свирепог убиства јерменског генерала

**ВЛАСТИМИР ВУЈИЋ**

**ПРЉАВИ СЦЕНАРИО ФИДЕСА**

Այնուհետեւ Ֆիդեսի կեղտոտ սցենարի կծիկը ինքն իրեն սկսեց բացվել: Նախ ադրբեջանցի դիվանագետ Զիհադ Օրույը ընդունեց, որ Բաքուն Բուդապեշտի հետ իր երկկողմանի հարաբերությունները բարձրացրել է դեսպանատներ բացելու մակարդակով` նպատակ ունենալով հեշտացնելու Ռամիլ Սաֆարովին ազատ արձակելը: Խաղաքարտերը մինչեւ վերջ բացել է Ադրբեջանի նախագահ Ալիեւի` քաղաքական գծով խորհրդական Նովրուզ Մամեդովը. «Սաֆարովին ազատ արձակելու գաղտնի բանակցությունները Բուդապեշտի հետ տեւել են մեկ տարի, եւ այդ հարցում առանցքային դեր է խաղացել Վիկտոր Օրբանը: Հունգարիայի վարչապետի հունիսյան այցի ժամանակ Բաքվում ամեն բան ավարտին է հասցվել», նշել է Մամեդովը:

Ալիեւի ու Օրբանի հունիսյան բանակցությունների բովանդակությունը քողի տակ երկար չմնաց: Բաքուն պարտավորվել է մինչեւ 2015 թվականը երեք միլիարդով գնել Հունգարիայի պետական բաժնետոմսերը` տարեկան մեկ միլիարդի չափով: Դրանից հետո Օրբանը խուսանավել է Արժույթի միջազգային հիմնադրամի հետ նախկինում սկսված բանակցություններից` մերժելով նրա տրամադրած վարկերը` փորձելով մեկ անգամ եւս հասարակ քաղաքացիների առջեւ նախընտրական տարում ներկայանալ որպես Հունգարիայի ֆինանսական անկախության ապահովման ջատագով: Այնուհետեւ Ալիեւը նրան հավաստիացրել է, որ «Նաբուկկո» նավթագազուղին կանցնի Հունգարիայի տարածքով, իսկ համաձայնագրի երրորդ պայմանը կկատարվի 2013-ի մարտին` յոթ ամսվա ընթացքում Բաքվում կկառուցվի հունգարական հսկայական բիզնես-կենտրոն, որը զգալի չափով հնարավորություն կտա թեթեւացնելու հունգարական ապրանքների ձեռքբերումը ոչ միայն ադրբեջանական, այլեւ այսօր արդեն ինքնիշխան դարձած նախկին Խորհրդային Միության մյուս հանրապետությունների շուկաներում:

Եվ որպես վերջաբան` Բուդապեշտը Բաքվից զատ գաղտնի բանակցություններ է վարում Անկարայի հետ: Սաֆարովին Ադրբեջանին հանձնելուց հետո նույն ժամանակ Թուրքիայից լուր է ստացվել, որ Դամասկոսում երկշաբաթյա գերեվարումից ազատ են արձակվել վաղաժամկետ թոշակավորված հունգար երեք ոստիկաններ, ում գերեվարել էին սիրիացի խռովարարները, ովքեր մեղադրվում են Ասադի կառավարությանն աջակցելու համար: Սաուդյան Արաբիայից, Քաթարից, ԱՄՆ-ից զատ, Թուրքիան սիրիական պատերազմի հակակառավարական ուժերի ամենամեծ դաշնակիցն է: Թե ինչպիսին են նրա հարաբերությունները խռովարարների հետ, պերճախոս վկայում է նաեւ վերոհիշյալ միջադեպը:

Թարգմանությունը սերբերենից` ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ

ՎԱՇԻՆԳՏՈՆ

# ԱՄՆ-ում սկսվել է վաղաժամկետ քվեարկություն

## *Օբաման դարձյալ առջեւում է*



**ԱՄՆ նախագահական ընտրությունների անցկացմանը մեկ ամսից էլ պակաս ժամանակ է մնացել: Նախագահության հանրապետական թեկնածու Միթ Ռոմնին առաջվա պես փոքր-ինչ զիջում է դեմոկրատների թեկնածուին` գործող նախագահ Բարաք Օբամային: Սակայն Օբաման եւս խոցելի է. նրա թույլ տեղը երկրի տնտեսությունն է: Եթե նախքան ընտրությունները որեւէ խոշոր փոփոխություն չկատարվի, ապա Օբաման, ամենայն հավանականությամբ, կվերընտրվի նախագահի պաշտոնում: Այդ դեպքում նա ստիպված կլինի լուծել իր նախագահական առաջին ժամկետի տարիներին ծագած բարդ խնդիրները:**

**Վերջերս անցկացված հարցումների համաձայն, Ռոմնին ավելի ու ավելի մեծ չափով հետ է մնում Օբամայից: Նախընտրական մրցավազքի ամբողջ ժամանակամիջոցում նա ոչ մի անգամ չի գերազանցել իր մրցակցին: Ի-ՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունն ընդգծում է, որ առանց դրա ԱՄՆ նախագահական ընտրություններում մինչեւ օրս դեռ ոչ ոք չի հաղթել:**

**Ավելին, վերջերս Ռոմնին հրապարակավ խոստովանեց, որ ամերիկացիների կեսը երբեք չի քվեարկի իր օգտին: Հընթացս նա վիրավորեց այդ մարդկանց` անվանելով «ծրիակերներ»:**

**Իր նախընտրական ելույթներում եւ հանդիպումների ժամանակ Ռոմնին այդ կարգի բազմաթիվ սխալներ է թույլ տվել: Հարցումները վկայում են, որ նույնիսկ հանրապետականները բավական կասկածամիտ են իրենց թեկնածուի հանդեպ: Պահպանողականները հենց սկզբից ձգտում են ոչ այնքան Ռոմնիի ընտրությանը, որքան Օբամայի պարտությանը:**

**Ի դեպ, ամերիկյան նահանգների ավելի քան կեսի տարածքներում արդեն սկսվել է վաղաժամկետ քվեարկություն: Սեպտեմբերի 30-ին այն սկսվեց մայրաքաղաքային Կոլումբիա օկրուգում եւ Նեբրասկայում, իսկ երեկ անցկացվում էր Նյու Յորքում, Օհայոյում եւ Ֆլորիդայում:**

**Փորձագետներից շատերը համակարծիք են, որ Ռոմնիի զինակիցները նրան այնքան էլ չեն վստահում, որ հոկտեմբերի 3-ին սկսվող նախընտրական բանավեճերի ժամանակը սահմանափակ է, եւ եթե Ռոմնին չկարողանա իրավիճակն արմատապես բեկել իր օգտին, ապա հանրապետականների դրամական գլխավոր միջոցները կուղղվեն Կոնգրեսի ընտրություններում նրանց թեկնածուների աջակցմանը: Սենատում իրենց մեծամասնությունը վերականգնելու համար հանրապետականները պարտավոր են այնտեղ հետ նվաճել չորս լրացուցիչ տեղ: Տեղացի դիտորդների կարծիքով, դա միանգամայն լուծելի խնդիր է:**

**Շատերը համոզված են, որ առաջիկա մեկ ամսում Օբամային կկանխանշի ավելի շատ տնտեսությունը, քան քաղաքականությունը: ԱՄՆ պետական պարտքը հասել է աննախադեպ չափերի, իսկ ընտրություններից հետո հարկ կլինի էլ ավելի բարձրացնել պարտքի թույլատրելի առավելագույն սահմանը:**

# Աֆղանստանում սպանված ամերիկացիների թիվն անցել է 2000-ից

## *Նոր հարձակում շարասյան վրա*



**Վերջին 11 տարում Աֆղանստանում սպանված ամերիկացի զինծառայողների թիվը անցել է 2000-ի սահմանագիծը, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Վերջինիս տվյալներով, 2000-րդ զոհը դարձավ սեպտեմբերի 30-ին Աֆղանստանի արեւելյան պահակակետերից մեկում անվտանգության ուժերի աֆղան զինծառայողի կրակից սպանված ամերիկացի զինվորը: Հարձակման ժամանակ սպանվել է ՆԱՏՕ-ի եւս մեկ զինծառայող, սակայն` ոչ ամերիկացի: Սպանվել են նաեւ երկու աֆղան զինծառայողներ:**

**Հոկտեմբերի 1-ի առավոտյան տեղի է ունեցել մի նոր հարձակում, այս անգամ` Խոստ քաղաքով անցնող ամերիկյան եւ աֆղանական զորքերի շարասյան վրա: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ շարասյան ճանապարհին որոտացել է մի հուժկու պայթյուն: Աֆղան եւ ամերիկացի զինծառայողների, ինչպես նաեւ խաղաղ բնակչության մեջ կան զոհեր:**

**ՆԱՏՕ-ի ուժերի մամլո ծառայությունը հաստատում է ամերիկացի 3 զինծառայողների մահը: Տեղական իշխանությունները հաղորդում են, որ զոհվել են Խոստ քաղաքի 5 բնակիչներ եւ 4 աֆղան ոստիկաններ: Տասնյակ մարդիկ վիրավորվել են:**

**Հարձակումը կատարվել է նահանգային իշխանության շենքից ոչ հեռու: Ստացված տեղեկությունների համաձայն, շարասյան ավտոմեքենաներից մեկին ականված մոտոցիկլետով բախվել է մահապարտ ահաբեկիչը:**

**Brookings Institution անկախ հիմնադրամի վիճակագրության համաձայն, ամերիկացի զինծառայողների 40 տոկոսը Աֆղանստանում սպանվել է ահաբեկիչների ինքնաշեն պայթուցիկ սարքերի օգտագործման հետեւանքով, մոտ 30 տոկոսը` յուրայինների կրակից: Դիտորդները նաեւ նշում են, որ ամերիկյան զորքերի կորուստները աճել են 2009-ին 33.000-անոց զորախումբ ուղարկելուց հետո: Այդ խմբավորումը պետք է ճնշեր «Թալիբան» շարժման ահաբեկիչների հարաճուն ակտիվությունը:**

**Casualities.org կայքէջը իր հերթին հաղորդում է, որ 2012 թ. սեպտեմբերի 30-ի տվյալներով, Աֆղանստանում սպանված ամերիկացի զինծառայողների թիվը հասնում է 2125-ի: Բրիտանացիների կորուստները կազմում են 433 մարդ, մյուս երկրների զինծառայողներից սպանվել է 633 մարդ: Ամենամեծ կորուստները արձանագրվել են 2010-ին:**

ԹԷՔԷԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

# Տոքթ. Նուբար Պէրպէրեանի 90-ամեակը



*ՀՀ արտգործնախարար Էդ. Նալբանդեան «Մովսէս Խորենացի» շքանշան կը յանձնէ դոկտ. Ն. Պէրպէրեանին:*

**25 Սեպտեմբերը կը նշէ մեր ալեհեր եւ վաստակաշատ ղեկավար ընկերոջ՝ տոքթ. Նուբար Պէրպէրեանի 90-րդ տարեդարձը:**

**Այս պատկառելի հանգրուանը կը հանդիսանայ ազգային եւ հրապարակագրական յորդառատ իրագործումներու պանծալի դափնեպսակը մեր յետ-Եղեռնեան մտաւորականութեան «վերջին Մոհիկան»-ին, որ կեանք մը ամբողջ անսակարկ նուիրումով եւ անայլայլ ուղղամտութեամբ ծառայեց որպէս լոյսի եւ յոյսի փարոսը Սփիւռքահայ գաղութներու, Եգիպտոսէն՝ Եւրոպա, եւ Ամերիկաներէն մինչեւ Աւստրալիա, իր բազմահազար կուռ խմբագրականներով, ներհուն յօդուածներով եւ հռետորաշունչ ճառախօսութիւններով:**

**Ու հակառակ դիւրաբեկ իր առողջութեան, հոգեկան եւ իմացական երիտասարդական իր անսպառ եռանդով տոքթ. Պէրպէրեան կը շարունակէ տակաւին մօտէն հետեւիլ ազգային եւ միջազգային քաղաքական, մշակութային ու ընկերային զարգացումներուն, եւ հանրութեան պարբերաբար տրամադրել իր կշռադատեալ եւ պայծառատես վերլուծումները:**

**Փարիզի տնտեսական համալսարանի իրաւագիտութեան բաժնէն բացառիկ յաջողութեամբ վկայուելէ ետք, տոքթ. Պէրպէրեան՝ փոխանակ իր անձին համար բարգաւաճ ապագայ մը ապահովելու բնական ձգտումին, նախընտրեց իր բոլոր կարողականութիւնը, իր կեանքը ամբողջ, անսակարկ նուիրել իր բազմաչարչար ժողովուրդի վերապրումին եւ արդարութեան պահանջի նկրտումին:**

**90-ամեակի այս նշանակելի հանգրուանին, կը խոնարհինք մեր երէց ղեկավարին իտէալապաշտ կեանքին ու պատկառազդու վաստակին առաջ եւ կը մաղթենք, որ դեռ երկար տարիներ շարունակէ օրինակ հանդիսանալ Ռամկավար Ազատական Կուսակցութեան եւ Թէքէեան Մշակութային Միութեան միջոցներով մեր նոր սերունդներուն, եւ խանդավառել բոլորս ազգանուէր ծառայութեան ուղիներով:**

*ԹՄՄիութեան*
*կեդրոնական վարչութիւն*

# Բրիտանական տարը՝ «Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնին



Բրիտանական էկրանային պարարվեստի լավագույն նմուշները ներկայացնող «Forward Motion» ֆիլմաշարը կներկայացվի «Հայ ֆեստ» միջազգային թատերական 10-րդ փառատոնին: Այն արտացոլում է բրիտանական պարարվեստի զարգացման նորարար միտումները եւ ներկայացնում Միացյալ Թագավորության արվեստագետների տեսակետը ժամանակակից պարողների գործունեության վերաբերյալ: Բրիտանական խորհրդի եւ «South East Dance» կազմակերպության հետ համատեղ ստեղծված այս շարքը ցուցադրվել է աշխարհի տարբեր անկյուններում՝ Ավստրալիայում, Հնդկաստանում, Չինաստանում, Ճապոնիայում եւ եվրոպական երկրներում՝ բացահայտելով բրիտանական պարարվեստի բազմազանությունն ու ազդեցությունն արվեստի այս ճյուղի զարգացման համաշխարհային միտումների վրա:

Հոկտեմբերի 2-9 յուրաքանչյուր օր ժամը 14.00-ին Երեւանի պետական տիկնիկային թատրոնում կցուցադրվի «Forward Motion» շարքի երեք ֆիլմից մեկը: Առաջին՝ «Ներածություններ» հատվածը ներկայացնում է կարճամետրաժ պարային ֆիլմեր, իսկ Բրայթընի համալսարանի պրոֆեսոր Լիզ Ագիսը պատմում է էկրանային արվեստի ժանրի մասին:

«Խորաթափանցություն» հատվածում պարողներն ու կինոգործիչները քննարկում են իրենց աշխատանքը ու ներկայացնում էկրանի համար բեմադրվող՝ էկրանային պարի առանձնահատկությունները: Կինոգործիչ Իզաբել Ռոֆամորան պատմում է իր «Հորիզոնի արտաքսումը» պարային ֆիլմի ստեղծման մասին, ընդգծում ձայնի ու երաժշտության կարեւորության մասին: Նրա ֆիլմը համեմված է ոչ միայն բարձրակարգ պարային շարժումներով, այլեւ՝ հայկական դուդուկով:

«Ջիվան Գասպարյանը հայ դուդուկահար է: Երբ ես առաջին անգամ լսեցի նրա մասին դեռ 2002 թվականին, հասկացա, որ նրա երաժշտությունը կօգտագործեմ իմ ֆիլմում»,- «Forward Motion» ֆիլմում պատմում է Իզաբել Ռոֆամորան:

Երրորդ՝ «Արվեստագետների ընտրություն» ծրագրի ընթացքում Միացյալ Թագավորության ժամանակակից առաջնակարգ պարողները ներկայացնում են իրենց ներշնչանք հանդիսացող ֆիլմերը: Ակրամ Խանը պատմում է Լոյդ Նյուսոնի «Ապրելու արժեքը», իսկ Շոբանա Ջեյասինգը՝ Միրանդա Պեննելի «Երեկոյահավաք» ֆիլմի մասին:

«Forward Motion» էկրանային պարարվեստը ներկայացնող ֆիլմը ցուցադրում է ինչպես լավագույն արվեստագետների աշխատանքը, այնպես էլ փորձարարական նորարարությունները՝ հիմք ստեղծելով քննարկումների համար:

«Հայ ֆեստ» միջազգային թատերական փառատոնի հետ Բրիտանական խորհուրդը համագործակցվում է հիմնադրման օրից՝ ներկայացնելով բրիտանական կատարողական արվեստի լավագույն եւ նորարար նմուշները:

*Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի հանրային կապերի պատասխանատու **Արեւիկ Բադալյանին**՝ 055 00 88 58, 010 55 29 45 (104), arevik.badalyan@british-council.am կամ այցելեք www.britishcouncil.am կայքը:*

# Հայ նկարիչների ցուցահանդես Պեկինում

**Սեպտեմբերի 28-ին Չինաստանի մայրաքաղաքում բացվեց «Ապագան եւ ներկան» խորագիրը կրող Պեկինի միջազգային 5-րդ կերպարվեստի բիենալեն (5-th Beijing International Art Biennale): Մոտ մեկ ամիս տեւող այս խոշոր ցուցահանդեսին ներկայացված են աշխարհի 85 երկիր ներկայացնող 500 հեղինակների ավելի քան 700 աշխատանքներ:**

**Բիենալեի բացման հանդիսավոր արարողությանը մասնակցեցին Չինաստանի պետական եւ հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, Պեկինում հավատարմագրված դեսպաններ եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարներ: Պատվավոր հյուրերի շարքում էր Չինաստանում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը:**

**Հայաստանի մշակույթն այս օրերին առանձնահատուկ ուշադրության կենտրոնում է: Բիենալեի շրջանակներում կազմակերպվել են 4 հատուկ ցուցադրումներ, որոնց թվում է «Հայաստանի ժամանակակից կերպարվեստը» խորագիրը կրող առանձնացված ցուցահանդեսը: Այստեղ ներկայացված են 11 արվեստագետների 33 ստեղծագործություններ: Նման միջոցառման իրականացումը հնարավոր դարձավ Չինաստանում Հայաստանի դեսպանության եւ ՀՀ մշակույթի նախարարության համատեղ ջանքերի շնորհիվ՝ ժամանակակից արվեստի ճանաչված փորձագետ Սոնա Հարությունյանի եւ բազմաթիվ այլ արվեստագետների անմիջական մասնակցությամբ եւ աջակցությամբ:**

**Անհրաժեշտ է նշել, որ բիենալեի հիմնական թեմատիկ հատվածում նույնպես ցուցադրվում են հայազգի 5 արվեստագետների աշխատանքներ, որոնք ներկայացնում են Հայաստանը, Կիպրոսը եւ Լիբանանը:**

**Բիենալեին մասնակցելու նպատակով Պեկին ժամանած հայ նկարիչներն այցելեցին Հայաստանի դեսպանություն, ուր ծանոթացան ՀՀ անկախության տարեդարձի եւ Հայաստանի ու Չինաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակի կապակցությամբ ցուցադրվող հայ ժամանակակից գեղանկարիչների շուրջ 80 կտավներին:**

# «Վերջին ֆուտուրիստի» ցուցահանդեսը Հայաստանում



**Երեկ Նարեկացի արվեստի միությունում կայացավ ավանգարդի ամենակարկառուն ներկայացուցիչներից Վահրիճ (Վագրիչ) Բախչանյանի առաջին անհատական ցուցահանդեսը, ինչպես նաեւ նյույորքյան շրջանի աշխատանքների գեղարվեստական ալբոմի շնորհանդեսը:**

**Վահրիճ Բախչանյանին քննադատները բնորոշում են որպես՝ «Խորհրդային ավանգարդի հայրապետ», «Վերջին ֆուտուրիստ», «Պեղած գազան»: Բախչանյանին է պատկանում աֆորիզմի վերածված՝ «Մենք ծնված ենք, որպեսզի Կաֆկան եղելություն դարձնենք» թեւավոր խոսքը:**

**Վահրիճ Բախչանյանի կենսագրությունն ավելի քան տպավորիչ է՝ ունեցած ցուցահանդեսների շնորհիվ՝ Փարիզի Պոմպիդուի անվ. կենտրոնում, Տրետյակովյան պատկերասրահում եւ բազում այլ հեղինակավոր կենտրոններում: Իսկ նրա գործերը զետեղված են այնպիսի մշտական հավաքածուներում, ինչպիսիք են՝ Յակոբ եւ Քենդա Բար-Գերայի հավաքածուն՝ Քյոլնում, Ժամանակակից արվեստի կենտրոնը՝ Մոսկվայում, Տրետյակովյան պետական պատկերասրահը, Պետական ռուսական թանգարանը՝ Սանկտ Պետերբուրգում, Փոլ Գեթիի անվ. արվեստի թանգարանը՝ Լոս Անջելեսում, Ցիմերլիի անվ. արվեստի թանգարանը՝ Նյու Ջերսիում, Իգոր Մարկինի հավաքածուն եւ այլն:**

**Ցուցահանդեսի բացման առթիվ Նյու Յորքից Երեւան են ժամանել նկարչի այրին Այրին Բախչանյանը եւ կինոռեժիսոր Անդրեյ Զագդանսկին, ով այժմ աշխատում է Բախչանյանի կյանքին եւ ստեղծագործությանը նվիրված կենսավավերագրական կինոնկարի վրա:**

**Ցուցահանդեսը բաց է մինչեւ հոկտեմբերի 7-ը: Մուտքն ազատ է:**

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Բեռլինի Հայկական դպրոցը դարձավ 3 տարեկան

**Սեպտեմբերի 30-ին Դոլգենզեե տրասե 8 հասցեում գտնվող «Sewansee» (Սեւանա լիճ) երեկույթներ կազմակերպող ընկերության նորակառույց շքեղ հանդիսասրահում տեղի ունեցավ Բեռլինի հայկական դպրոցի հերթական շնորհանդեսը՝ կապված դպրոցի եռամյա տարեդարձի, ինչպես նաեւ 2012/13 թթ. ուսումնական տարին սկսվելու հետ: «Sewansee» (Սեւանա լիճ) ընկերության տնօրենությունը հանձինս պարոնայք Աշոտ Մանուկյանի եւ Վիկտոր Գերասիմյանի ջանք չէին խնայել առատաձեռն հյուրասիրությամբ եւ մեծ շուքով դիմավորելու պատվավոր հյուրերին, աշակերտներին եւ ծնողներին: Երեկույթին մասնակցում էին Գերմանիայում ՀՀ դեսպան Արմեն Մարտիրոսյանը, Գերմանիայում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Հարություն Գրիգորյանը եւ թվով մոտ 100-ից ավելի հյուրեր: Շնորհանդեսին իրենց ելույթներով եւ գիտելիքներով հանդես եկան դպրոցի 22 սաները: Հայերենի ուսուցչուհի տիկին Կարինե Քալաշյանն այս անգամ համակցել էր աշակերտների հանդիսավոր բեմադրությունը գիտելիքներ ստուգող հարցադրումների հետ, որոնք հենց դպրոցի սաների կողմից արքայի եւ նրա խորհրդականի երկխոսության ընթացքում սաները միմյանց էին ուղղում եւ իրենք էլ ինքնաբուխ պատասխանում վերջիններիս: Հարցերի պատասխանները վաղօրոք չէին ներկայացված դպրոցի սաներին: Վերջիններս տարաբնույթ էին եւ կոչված էին ստուգելու սաների հայերենի քերականական, երկրագիտական եւ աշխարհագրական գիտելիքները: Դպրոցի սաների կողմից «Էրեբունի-Երեւան», «Կիլիկիա» եւ «Միացեք հայեր» երգերի կատարմամբ փաստորեն Սպենդիարյանի անվան ակադեմիական օպերայի եւ բալետի թատրոնի վաստակավոր մեներգչի, այժմ բեռլինաբնակ Արտակ Կիրակոսյանի կողմից հիմնադրվեց Բեռլինի հայկական դպրոցի երգչախումբը, որը պարբերաբար այսուհետեւ կգործի հայոց լեզվի եւ գրականության դասընթացների համընթաց: Ինչպես դպրոցի հիմնադիր Միքայել Մինասյանը իր բացման խոսքում նշեց, դպրոցում պարբերաբար հրավիրվող տարբեր հյուր-ուսուցիչների կողմից այսուհետեւ կդասավանդվեն նաեւ հայոց պատմություն, կրոն եւ հայ առասպելաբանություն առարկաները: Պարոն Մինասյանը իր խորին շնորհակալությունն հայտնեց ՀՀ դեսպանին, ԼՂՀ ներկայացուցչին եւ ՀՀ սփյուռքի նախարարությանը դպրոցին մեթոդական նյութերով եւ դասագրքերով աջակցելու համար:**

**Իր շնորհակալական ելույթում դեսպան Արմեն Մարտիրոսյանն իր ուրախությունն հայտնեց դպրոցի սաների հաջողությունների կապակցությամբ եւ հայեցի գիտելիքների ձեռք բերման մեջ ցանկացավ նրանց նորանոր հաջողություններ: Իսկ պրն Հարություն Գրիգորյանը շեշտեց սփյուռքում հայկական դասընթացների անցկացման դերն ու նշանակությունը հայապահպանության գործում՝ այն տեղայնացնելով Բեռլինի Հայկական դպրոցի օրինակի վրա:**

**Երեկոն անցավ ջերմ եւ ուրախ տրամադրությամբ:**

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ
Դպրոցի հիմնադիր

ԱԶԳ

# Մարզական

## Դարչինյանը պարտության մատնեց անպարտելի Լուիս Օռլանդո դել Վալեին



Թեթեւագույն քաշային կարգում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն Վախթանգ Դարչինյանն իր խոստման տերը եղավ ու պրոֆեսիոնալ ռինգում հերթական չեմպիոնական գոտին նվաճեց: ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգում անցկացված 10-ռաունդանոց մենամարտում հայ բռնցքամարտիկը միավորներով (99-91, 99-91, 96-94) հաղթեց պուերտոռիկացի Լուիս Օռլանդո դել Վալեին եւ նվաճեց բռնցքամարտի Հյուսիսամերիկյան ֆեդերացիայի՝ NABF-ի վարկածով չեմպիոնի թափուր տիտղոսը 2-րդ թեթեւագույն քաշային կարգում: Նշենք, որ պուերտոռիկացի բռնցքամարտիկը մինչ այդ պարտություն չուներ եւ հաղթել էր անցկացրած բոլոր 16 մենամարտերում:

Վախթանգը շատ վստահ անցկացրեց ողջ մենամարտը՝ աչքի ընկնելով ճիշտ կազմակերպված պաշտպանությամբ եւ գրագետ գրոհներով: Ողջ մենամարտի ընթացքում նա առավելություն ուներ մրցակցի նկատմամբ, որի շնորհիվ էլ շահեց մրցախաղը: Պրոֆեսիոնալ ռինգում 36-ամյա Վախթանգը 38-րդ հաղթանակը տոնեց անցկացրած 44 մենամարտերում, որոնցից մեկն ավարտվել է ոչ-ոքի:

«Ես վերադարձել եմ եւ այժմ ինձ ավելի ուժեղ եմ զգում: Չեմ կարող հավատալ, որ այդ երեխայի հետ մենամարտում մասնագետները նախապատվությունը տալիս էին մրցակցին՝ ինձ վերապահելով հետնապահի դերը: Մրցակիցս թեեւ ամուր տղա էր, սակայն շատ դանդաղկոտ էր, որին հաղթեցի բոլոր ռաունդներում: Ես նրանից բարձրակարգ բռնցքամարտիկ եմ: Պայքարելու եմ աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Ցանկանում եմ մենամարտել Աբներ Մարեսի հետ: Նա պետք է ընդունի իմ մարտահրավերը, քանի որ նախկինում մենք մենամարտել ենք միմյանց հետ եւ ինձանից գողացել էին հաղթանակը: Ճիշտ է, ուժեղագույնին համառ մենամարտում որոշելն այնքան էլ հեշտ չէր, սակայն ավելի ուժեղ էի Մարեսից», մենամարտից հետո հայտարարել է Վախթանգ Դարչինյանը:

Պուերտոռիկացին նշել է, որ իր սխալն այն էր, որ թույլ տվեց մրցակցին իր կամքը թելադրել ռինգում:

## Օլիմպիական չեմպիոններից երեքը բարելավել են ցուցանիշները




**ՖԻԴԵ-ն հրապարակել է հոկտեմբերի 1-ի դրությամբ ուժեղագույն շախմատիստների հերթական վարկանիշային աղյուսակը: Շախմատի համաշխարհային օլիմպիադայի մեր 5 չեմպիոններից 3-ը՝ Լեւոն Արոնյանը, Վլադիմիր Հակոբյանն ու Տիգրան Պետրոսյանը բարելավել են իրենց վարկանիշները:**

**Արոնյանն իր վարկանիշը (2821) ավելացրել է 5-ով եւ այժմ 22 միավորով է զիջում դասակարգման ցուցակի առաջատար Մագնուս Կառլսենին, որը պահպանել է իր 2843 վարկանիշը: Արոնյանի ներկայիս վարկանիշն ընդամենը 4-ով է զիջում այս տարվա մայիսին ունեցած իր ռեկորդային ցուցանիշին:**

**Մեծ առաջընթաց է գրանցվել հատկապես Վլադիմիր Հակոբյանի մոտ, որը 16-ով ավելացնելով վարկանիշը (2703), կրկին հատեց 2700-ի սահմանագիծը: Նա 63-րդ տեղից տեղափոխվել է 47-րդ հորիզոնական: 2-ով վարկանիշն ավելացրել է Տիգրան Պետրոսյանը, որը 2659 գործակցով մեկ հորիզոնականով բարձրացել է ու զբաղեցնում է 97-րդ տեղը:**

**Իսկ ահա Սերգեյ Մովսիսյանը, որն օլիմպիադայում մեր թիմին իրոք «ոսկե» միավոր պարգեւեց, դուրս է մնացել 2700 եւ ավելի վարկանիշ ունեցող էլիտար գրոսմայստերների խմբից: Նա վարկանիշը (2699) նվազեցրել է 6-ով եւ 41-րդ տեղից նահանջել է 52-րդ հորիզոնական: Գաբրիել Սարգսյանն էլ վարկանիշը (2692) նվազեցրել է մեկով ու նահանջել մեկ հորիզոնականով՝ զբաղեցնելով 56-րդ տեղը:**

**Հայ շախմատիստներից 100 ուժեղագույնների ցանկում ընդգրկված է նաեւ ֆրանսահայ գրոսմայստեր Տիգրան Ղարամյանը, որը 2661 վարկանիշով 94-րդ տեղում է: Նա էլ վարկանիշը նվազեցրել է 2-ով եւ 90-րդ տեղից նահանջել է:**

**Կանանց դասակարգման ցուցակում Հայաստանը ներկայացված է 2 շախմատիստով: Էլինա Դանիելյանը 2476 վարկանիշով 23-րդ տեղում է: Սեպտեմբերի համեմատ նա պահպանել է թե՛ վարկանիշը, թե՛ իր դիրքը: Իսկ ահա Լիլիթ Մկրտչյանը վարկանիշն (2456) ավելացրել է 2-ով եւ մեկ հորիզոնականով բարձրանալով, զբաղեցնում է 34-րդ տեղը:**

**ՖԻԴԵ-ի անդամ 157 երկրների ցանկում Հայաստանն իր միջին 2662 վարկանիշով եզրափակում է լավագույն հնգյակը: Ցուցակը նախկինի պես գլխավորում է Ռուսաստանը (2743), որին հաջորդում են Ուկրաինան (2704), Ֆրանսիան (2666) եւ Չինաստանը (2665): Լավագույն տասնյակում են նաեւ Հունգարիան (2659), ԱՄՆ-ը (2655), Ադրբեջանը (2644), Հնդկաստանը (2643) եւ Հոլանդիան (2638):**

## Առաջին շրջանն ավարտվեց

**Բրազիլական Սան Պաուլու քաղաքում ավարտվեց շախմատի «Մեծ սաղավարտ» մրցաշարի 1-ին շրջանը: Վերջին 2 հանդիպումներում Լեւոն Արոնյանը հաշտություն կնքեց Մագնուս Կառլսենի եւ մրցաշարի հայտնությունը դարձած Ֆաբիանո Կարուանայի հետ: Արոնյանը 5 հնարավորից վաստակած 7 միավորով ընթանում է 2-րդ տեղում: Նա մեկնարկում Սերգեյ Կարյակինին հաղթելուց հետո 4 անընդմեջ ոչ-ոքի է գրանցել իր օգտին:**

**Առաջատարը 11 միավորով իտալացի Ֆաբիանո Կարուանան է, որը 4-րդ տուրում հաղթել էր Ֆրանսիսկո Վալյեխոյին: Կառլսենը 6 միավորով 3-րդ տեղում է: 5 միավոր ունի Վիշվանաթան Անանդը: 3-ական միավորով աղյուսակը եզրափակում են Սերգեյ Կարյակինն ու Ֆրանսիսկո Վալյեխոն:**

**Այժմ շախմատիստները մի փոքր դադարից հետո իրենց մրցավեճը կշարունակեն իսպանական Բիլբաո քաղաքում, որտեղ հոկտեմբերի 8-ին կսկսվի մրցաշարի 2-րդ շրջանը: 6-րդ տուրում Արոնյանը սեւերով կխաղա Կարյակինի հետ: Կկայանան նաեւ Վալյեխո-Անանդ, Կառլսեն-Կարուանա պարտիաները:**

## Խայտառակ ելույթներ Սերբիայում

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականն ավարտեց իր խայտառակ ելույթները Սերբիայում անցկացված Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: 3-րդ խաղում էլ մեր պատանիները 0-3 խոշոր հաշվով զիջեցին մոլդովացիներին: Հիշեցնենք, որ Սերբիայի եւ Բելառուսի հավաքականների հետ խաղում հայ ֆուտբոլիստները 5-ական անպատասխան գնդակ էին ընդունել սեփական դարպասը: Խմբի հաղթող ճանաչվեցին սերբերը, որոնք ավարտական խաղում էլ հաղթեցին՝ 7-0 հաշվով ջախջախելով բելառուսներին:

ՀՈԲԵԼՅԱՆ

## Մխիթարյանը պաշտոնական մրցումներում 100-րդ գոլը խփեց

**Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը շարունակում է իր արդյունավետ խաղը Դոնեցկի «Շախտյորում»: «Դնեպրի» հետ առաջնության 10-րդ տուրի խաղում էլ Հենրիխն աչքի ընկավ դիպուկ հարվածով՝ սրընթաց անցումից հետո դառնալով տպավորիչ գոլի հեղինակ: Այդ գոլը Մխիթարյանի 13-րդ գնդակն էր Ուկրաինայի ընթացիկ առաջնությունում եւ 100-րդը՝ պաշտոնական մրցումներում: Հենրիխ Մխիթարյանն ընդգրկվեց ռմբարկուների «100-ի ակումբում»՝ դառնալով 19-րդ անդամը:**

**Մխիթարյանին ընդամենը 6 մրցաշրջան պահանջվեց 100 գոլի սահմանագիծը հատելու համար: Պաշտոնական մրցումներում նա իր գոլերի հաշիվը բացել է 2006-ի մարտի 25-ին կայացած «Փյունիկ-2»-«Բանանց-2» գավաթի մրցաշարի խաղում: Իսկ սեպտեմբերի 19-ին 17-ամյա Հենրիխն իր առաջին գոլը խփեց «Փյունիկում» նաեւ Հայաստանի առաջնությունում՝ գրավելով «Շիրակի» դարպասը:**

**«Փյունիկի» կազմում Մխիթարյանը հանդես եկավ մինչեւ 2009-ի հունիս՝ ՀՀ առաջնություններում անցկացրած 70 հանդիպումներում խփելով 30 գնդակ: Ամռանը նա տեղափոխվեց Դոնեցկի «Մետալուրգ», ինչը մեկ քայլ առաջընթաց էր հայ ֆուտբոլիստի կարիերայում: Ուկրաինայում Հենրիխը ոչ միայն կատարելագործեց ֆուտբոլային վարպետությունն ու խաղային նոր որակներ ձեռք բերեց, այլեւ շարունակեց արդյունավետ խաղը: Դոնեցկի «Մետալուրգում» անցկացրած 1,5 տարվա ընթացքում Հենրիխ Մխիթարյանը պաշտոնական մրցումներում 17 գոլի հեղինակ դարձավ, որից 4-ը խփեց Եվրոպայի լիգայի հանդիպումներում:**

**Իսկապես տաղանդավոր հայ ֆուտբոլիստի կարիերայի նոր էջը գրվեց Դոնեցկի «Շախտյորում», որի կազմում Հենրիխը 2 տարի շարունակ արժանացավ երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսներին, նվաճեց Ուկրաինայի Սուպերգավաթը: «Շախտյորում» Մխիթարյանը լիովին բացահայտեց ռմբարկուի իր հատկանիշները՝ 13 գնդակով վստահորեն գլխավորելով առաջնության ամենաարդյունավետ ֆուտբոլիստների ցանկը:**

**«Դնեպրի» հետ խաղից հետո Մխիթարյանը հետեւյալն է ասել. «Թուրին ենք մեկնում հաղթանակի վճռականությամբ: Չպետք է մոռանանք, որ «Յուվենտուսի» հետ խաղից հետո մրցելու ենք Եվրոպայի չեմպիոնների գավաթակիր «Չելսիի» հետ: Պետք է աշխատենք այս տարի ավելի հաջող հանդես գալ ու հաղթահարել խմբային մրցաշարի արգելքը: Պաշտոնական մրցումներում «Շախտյորում» ընթացիկ մրցաշրջանում արդեն 15 գոլ եմ խփել, ինչն իմ խաղընկերների շնորհիվ է: Խաղադաշտում փորձում եմ սառնասիրտ լինել, որպեսզի կարողանամ իրացնել գոլային պահերը: Չէ՞ որ խաղի ընթացքում կարող է քեզ միայն մեկ հնարավորություն ընձեռվի գրավելու մրցակցի դարպասը եւ դու պետք է ձգտես այն անպայման օգտագործել: «Շախտյորում» ընդհանրապես խորքից եմ գործում, սակայն Միրչա Լուչեսկուն ինձ խաղադաշտում ազատություն է ընձեռել»:**

**Ուկրաինայի առաջնության 10-րդ տուրում գոլի հեղինակ դարձավ նաեւ Դոնեցկի «Մետալուրգում» հանդես եկող Գեւորգ Ղազարյանը՝ գրավելով «Գովերլա-Զակարպատիեի» դարպասը: Բայց այդ գոլը թիմին չփրկեց 1-2 հաշվով կրած պարտությունից: Ղազարյանն Ուկրաինայի առաջնությունում 3-րդ գոլը խփեց:**

## «Արարատի» հաճելի անակնկալը

Ֆուտբոլի Հայաստանի առաջնության 24-րդ տուրում իր երկրպագուներին հաճելի անակնկալ մատուցեց «Արարատը»՝ Աբովյանում 1-0 հաշվով հաղթելով առաջատար «Միկային»: Արդեն 3-րդ րոպեին արարատցիները կարող էին բացել հաշիվը, սակայն Տիգրան Ոսկանյանը, որ նախորդ 2 խաղերում հստակ էր իրացրել 11 մ հարվածները, չկարողացավ հաղթող դուրս գալ Գեւորգ Կասպարովի հետ մենամարտում:

Սակայն այդ անհաջողությունը չընկճեց արարատցիներին, որոնք ընդմիջումից քիչ հետո գրավեցին մրցակցի դարպասը: Աչքի ընկավ պաշտպան Ռաֆայել Սաֆարյանը, որն անկյունայինի խաղարկումից հետո գլխի հարվածով գրավեց Կասպարովի պաշտպանած դարպասը:

«Միկայի» այդ «սայթաքումից» օգտվեցին շիրակցիները, որոնք Երեւանում 2-0 հաշվով հաղթելով «Ուլիսին», կրճատեցին առաջատարից միավորների տարբերությունը: 2 գոլերն էլ «Ուլիսի» դարպասն առաջին խաղակեսում խփեց «Շիրակի» երիտասարդ կիսապաշտպան Դավիթ Հակոբյանը:

Անկայուն ելույթներ է ունենում «Իմպուլսը», որի պատճառով թիմը բավական հետ է մնացել «Միկայից» ու «Շիրակից»: Հերթական խաղում էլ դիլիջանցիներն անհաջող հանդես եկան՝ 2-4 հաշվով պարտվելով «Փյունիկին»: Վերջինիս կազմում սկսել է արդյունավետ խաղ ցուցադրել թիմի ավագի պարտականությունները ստանձնած Դավիթ Մանոյանը: Այս անգամ նա 2 գոլ խփեց: Մեկ անգամ աչքի ընկավ Դավիթ Մինասյանը, իսկ մեկ գնդակ էլ սեփական դարպասը խփեց «Իմպուլսի» պաշտպան Ալիասան Իլիասուն: «Իմպուլսից» աչքի ընկան Նորայր Գյոզալյանը (11 մ-ից) եւ Ֆիլիպ Տիմովը:

«Բանանցին» ոչ մի կերպ չի հաջողվում կարգավորել խաղը: Սեփական հարկի տակ «Գանձասարի» հետ մրցավեճում էլ թիմին չհաջողվեց հաղթել: Դարպասները մնացին անառիկ:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Միկա | 24 | 16 | 4 | 4 | 40-23 | 52 |
| 2. Շիրակ | 23 | 15 | 4 | 4 | 40-23 | 49 |
| 3. Իմպուլս | 24 | 11 | 5 | 8 | 41-38 | 38 |
| 4. Փյունիկ | 23 | 11 | 3 | 9 | 43-32 | 36 |
| 5. Գանձասար | 23 | 8 | 7 | 8 | 24-20 | 31 |
| 6. Ուլիս | 24 | 7 | 5 | 12 | 29-34 | 26 |
| 7. Բանանց | 23 | 3 | 8 | 12 | 23-37 | 17 |
| 8. Արարատ | 24 | 4 | 2 | 18 | 18-51 | 14 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Նորայր Գյոզալյան | «Իմպուլս» | 14 |
| Սեմյոն Մուրադյան | «Միկա» | 10 |
| Վիուլեն Այվազյան | «Փյունիկ» | 10 |
| Ֆոֆանա Բեկո | «Շիրակ» | 9 |
| Լամին Լի Յորո | «Շիրակ» | 9 |

## Օզբիլիսի հաղթական գոլը

Ֆուտբոլի Ռուսաստանի առաջնության 10-րդ տուրում Գրոզնու «Թերեքի» նկատմամբ «Կուբանի» հաղթանակն ապահովեց 83-րդ րոպեին 30 մետրից կատարած հարվածով Արազ Օզբիլիսի խփած գնդակը: ՀՀ հավաքականի կիսապաշտպանը խաղադաշտ էր դուրս եկել 60-րդ րոպեին: «Կուբանը» հաղթեց 2-1 հաշվով: Օզբիլիսը ՌԴ առաջնությունում իր 3-րդ գոլը խփեց: 10 տուրից հետո «Կուբանը», որի կազմում հանդես է գալիս նաեւ Մարկոս Պիզելին, 16 միավորով 8-րդ տեղում է:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Փոթորիկ ... մատնոցում, ըստ Վարդան Օսկանյանի



*1-ին էջից*

Ու այդ գումարից հետագայում 181800 դոլար նվիրատուի (Հանթսմանից) կամքից անկախ նա ծախսել է անձնական նպատակներով:

Երբ պատգամավորները հետաքրքրվեցին, թե բողոքող չկա՝ հիմնադրամի նվիրատու Հանթսմանը չի բողոքում, այդ դեպքում ո՞րն է նպատակը հարուցված գործի, ո՞ւմ շահերն է պաշտպանում մեղադրանքը, գլխավոր դատախազը պատասխանեց, թե պաշտպանում է «Սիվիլիթաս» հիմնադրամի շահերը...Վ. Օսկանյանից: Մի խոսքով՝ Օսկանյանը մեղադրվում առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու եւ յուրացման արդյունքում ստացված եկամուտներն օրինականացնելու մեջ, ու պետք է պատգամավորների թույլտվությունը՝ նրան որպես մեղադրյալ ներգրավելու: Դա չի խանգարելու Օսկանյանի ազատ տեղաշարժին եւ պատգամավորական գործունեության իրականացմանը:

Ի պատասխան Օսկանյանը շատ բուռն, երբեմն էմոցիոնալ, վերջում քաղաքական ելույթ ունեցավ:Ներկայացրեց այն փաթեթի բովանդակությունը, որը բաժանվում էր նաեւ ԱԺ Դեմիրճյան մուտքի մոտ ի պաշտպանություն Օսկանյանի բողոքի ցույցի ընթացքում: «Ինչու է Օսկանյանը Հանթսմանի փողերն իր մոտ պահել եւ անձնական նպատակներով օգտագործել» ինքնահարցադրմանը պատասխանելով՝ Օսկանյանը տեղի ունեցողը ոչ թե փոթորիկ մի բաժակ ջրում, այլ փոթորիկ մատնոցում անվանեց: Նա նշեց, որ հենց Հանթսմաններն են ցանկացել գումարի մի մասը «Սիվիլիթասին», մյուս մասը՝ 1,427 մլն դոլարը Օսկանյանի տրամադրության տակ թողել՝ իր հայեցողությամբ օգտագործելու: Այդ մասին տեղյակ են եղել հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները (Ա. Հովսեփյանն ասում էր, թե ցուցմունք կա, որ տեղյակ չեն եղել): Մինչեւ Հանթսմանների գումարի փոխանցումը Օսկանյանն ու իր տիկինը ունեցել են 410 հազար դոլար, բացատրեց դրանք որտեղից՝ ընտանեկան գումարներ են, ընտանիքն իր տարբեր ճյուղավորումներով միշտ ոսկերչությամբ է զբաղվել, մեկ-մեկ նշեց փոխանցումները: Նա հակադրվեց դատախազի մեղադրանքին, նշելով, որ երբ 1,2 մլն դոլարը որպես ավանդ դրել է բանկում, 227 հազ. դոլար ազատ է թողել՝ «Սիվիլիթասին» է անհրաժեշտ եղել, որ ավանդային գումարը չխզեն ու գումար չկորցնեն: Ու դեռ ազատ թողնված գումարից մի 90 հազար դոլար էլ ավելի է պետք եղել («Սիվիլիթասն» ընդլայնվում էր), իր անձնական գումարից է տվել: Նա նաեւ նշեց, որ անցած շաբաթ օրը խորհրդի անդամների հետ խորհրդակցելով՝ իր հաշվին մնացած ողջ գումարը՝ 807 հազար դոլար փոխանցել է «Սիվիլիթասի» հաշվին, հակառակ Հանթսմանի ցուցումներին: Մայր գումար՝ պլյուս տոկոսի գումարները, կոպեկ-կոպեկ. «Պարո՛ն դատախազ, փողը կա, բողոքը չկա, այլ հակառա՛կ պնդումը կա: Հանթսմանը ասում է, որ հենց այդպես էլ պիտի լինի, մենք այդպես ենք ուզել: Սիվիլիթասի խորհուրդն ասում է՝ մենք խնդիր չունենք, էդպես էլ պետք է լիներ. փողը կա, բողոքը չկա: Ի՞նչ ասեմ ես: Ես կարծում եմ, որ սա փոթորիկ է ոչ թե ինչ-որ փոքր բաժակի մեջ, փոթորիկ է մատնոցի մեջ: Իսկապես ես նստած լսում եմ, մտածում եմ՝ մենք մեր երկրի խնդիրները թողած, այս հարցերո՞վ պիտի զբաղվենք, սրա՞նք են մեր խնդիրները: Տասը տարվա արտգործնախարարին բերում եք այստեղ այսպիսի հարցադրումներ ե՞ք անում», ասաց նա՝ նշելով, թե հասել ենք 1937 թվին՝ «մարդ լինի, հոդված կգտնվի», մարդ գտել են՝ փաստ չկա: Ապա եզրափակեց մի ուժգին քաղաքական ելույթով՝ իշխանություններին ունակ չհամարելով ոչ ներքին, ոչ արտաքին քաղաքականության մեջ, եւ նախագահական ընտրություններից առաջ այս ամենը ԲՀԿ-ին մրցակցությունից հանելու փորձ անվանելով:

Ասենք, որ ՀԱԿ-ից հարցեր ուղղեց եւ ելույթ ունեցավ միայն **Նիկոլ Փաշինյանն** առայժմ, նա կոշտ քննադատեց և՛ Օսկանյանին, և՛ իշխանությանը, «Ժառանգությունը» լռում էր, Օսկանյանին մի լավ պաշտպանեց ՀՅԴ-ն միայն:

Նիկոլ Փաշինյանն ասում էր, թե Հանթսմանն արդյո՞ք 1,5 մլն դոլար է տվել Օսկանյանին սիրուն աչքերի համար, իսկ միգուցե ԼՂՀ-ն բանակցային գործընթացից դուրս թողնելու, «Մեղրիի տարբերակի» (տարածքների փոխանակության) եւ իր՝ արտգործնախարարի պաշտոնից ինչ որ ծառայություններ մատուցելու դիմաց է տրվել: Նա անվանեց Օսկանյանին մարտի 1-ի մեղավորներից մեկը՝ հիշեցնելով 2008 թվականի մարտի 1-ի նրա ելույթն ու այս ոգով բավական կոշտ արտահայտություններ ուղղելով նրան ու ասելով, թե կոմպրոմիսի չի գնա մարտի 1-ի մեղավորներից եւ ոչ մեկի հետ: Ապա եւ իր խոսքի թնդությունից բաժին հանեց գլխավոր դատախազին՝ նշելով, թե դատախազության համարներով նրա օգտագործած 100 հազար դոլարից ավելի արժեք ունեցող «Ֆոլքսվագեն Ֆաետոնն» ուրիշի գույքն է, որը վերցրել ու չի վերադարձնում գլխավոր դատախազը, ուրիշից յուրացրած մեքենայի համար նրա դեմ պետք է քրգործ հարուցվի:

ԲՀԿ-ից **Նաիրա Զոհրաբյանը** ձայնի խիստ շեշտադրումներով զարմանք հայտնեց, թե համակարգը այնպես է պաշտպանում Հանթսմանին եւ «Սիվիլիթասին», որ շուտով երեւի գլխավոր դատախազը շնորհակալական նամակ ստանա Հանթսմանից՝ իր շահերը ներկայացնելու համար: Ասաց, որ մեղադրանքը քաղաքական կոմպոնենտ է պարունակում «Բարգավաճ Հայաստանի» եւ Վարդան Օսկանյանի դեմ, դա բոլորի համար ակնհայտ է, այլապես՝ գումարը տեղում է, բողոքող չկա, այլ եզրակացություն չի մնում: Խոսացավ, որ ԵԽԽՎ-ում բարձրացնելու է այդ հարցը, իսկ միջնորդագրի քննարկումից հետո ԲՀԿ-ն լքելու է ԱԺ նիստերի դահլիճը՝ այս քառօրյայի նիստերին չմասնակցելով, հետագա մասնակցության հարցն էլ ԲՀԿ-ն առանձին կքննարկի: Բայց «Կենտրոն» հեռուստատեսության տեսախցիկները նկարահանելու են քվեարկության ընթացքը, զգուշացրեց նա՝ կոչ անելով պատգամավորներին չմասնակցել փակ գաղտնի քվեարկությանը եւ չլեգիտիմացնել այն:

ՀՀԿ-ականների հարցերում մի տեսակ Օսկանյանին մեղմորեն արդարանալու հնարավորություն տվող երանգներ էին երեւում, իսկ **Գալուստ Սահակյանը** իր խոսքում նշեց, որ այս գործի առկայությունը միասին երկար ճանապարհ անցած ու մի 7 ամիս առաջ միասին նույն երգը երգող ԲՀԿ-ի հետ ՀՀԿ-ի հակասության մասին չի խոսում: Նշելով, որ եթե ժամանակին իրավապահ մարմիններին Վ. Օսկանյանը բացատրած լիներ այն բոլորը, ինչ ԱԺ-ում ասաց, գուցե այս միջնորդության հարկը չլիներ: «Մենք դատարան չենք, որ արդարացնենք կամ մեղադրենք», ասաց նա՝ հավելելով, որ Օսկանյանին պետք է հնարավորություն տրվի ապացուցելու իր անմեղությունը, դրա համար էլ պետք է պատգամավորները քվեարկեն իր ելույթի ոգով: Նրանից անմիջապես հետո ելույթ ունեցած **Վահան Հովհաննիսյանը** երեւի Գ. Սահակյանին էր հակադարձում, թե ոչ թե Օսկանյանը պետք է ապացուցի իր անմեղ լինելը, այլ իրավապահ մարմինները Օսկանյանի մեղավոր լինելը: Եվ օրինակ բերեց, թե սիրիահայերին աջակցելու համար ստեղծված «Օգնիր եղբորդ» նախաձեռնության շրջանակում իր անունով էլ է գումար փոխանցվում, կարո՞ղ է հետագայում իր համար էլ գլխավոր դատախազը միջնորդություն բերի Ազգային ժողով: Ասաց՝ Օսկանյանին ինչի մեջ ասես մեղադրեցին՝ «շպիոնաժի, Ղարաբաղը ծախելու», եւ այդ անում էր մի ուժի ներկայացուցիչ, որի իշխանություն եղած ժամանակ խորհրդարանում պատգամավոր էին ծեծում: Նա եւս քաղաքական ենթատեքստ տեսավ կատարվողում՝ այս հանգի, թե «Վարդան Օսկանյան, բա դու էն տղեն էի՞ր, որ քննադատեիր իշխանություններին»: **Արծվիկ Մինասյանը** տեղի ունեցողը համեմատեց «Մենք ենք, մեր սարերի» սցենարի հետ՝ նշելով, որ Հրանտ Մաթեւոսյանը եթե ողջ լիներ, դատի կտար՝ առանց իր համաձայնության սցենարը կրկնելու համար: Ըստ նրա՝ սա հարկային ոլորտի խնդիր է, եւ ոչ թե քրեական, քանի որ երբ գումարները ֆիզիկական անձի անունով են դրվում, այդպես կարելի է քիչ հարկ վճարելով ավելի մեծ տոկոսային շահույթ ստանալ, այստեղ հանցագործության նախադեպ չկա: Իսկ ավելի վաղ հանդես եկած ՀՅԴ խմբակցության ղեկավար **Աղվան Վարդանյանը** հարցրեց, թե փողերի լվացում որ ասում են, ուրեմն Հանթսմա՞նն էր լվացել, բայց հիմա միայն յուրացման մասին է խոսվում (չեմ հիշում՝ ով իր ելույթում ասաց՝ Հանթսմանին հրավիրե՞լ եք, նրա անունն է անընդհատ տրվում): «Հանձնելով Օսկանյանին՝ մեր պետականության հիմքում ական ենք դնելու», ասաց Ա. Վարդանյանը, քանի որ 10 տարի արտաքին գերատեսչություն ղեկավարած մարդուն այս տեսակ անհիմն մեղադրելով՝ մեր թշնամուն ենք նյութ տալիս, Հայաստանի հանդեպ վստահությունն ենք նվազեցնում: «Եթե այս երկրում մթնոլորտ չփոխվի՝ գլխավոր դատախազն ավելի հաճախ է գալու այս դահլիճ», իր ելույթում նշեց ԲՀԿ-ական **Վահե Հովհաննիսյանը**:

Ընդդիմադիր պատգամավորներից հերթագրվել են եւ այսօր ելույթ կունենան, այնպես որ հասկանալի կլինի՝ նրանց դիրքորոշումն արդյո՞ք տարբերվում է Նիկոլ Փաշինյանի դիրքորոշումից, ինչպես որ այլ անգամներ է եղել:

ԿԱՐԱԿԱՍԻՑ ՎԱՇԻՆԳՏՈՆ

# Չավեսը կքվեարկեր Օբամայի օգտին

**Վենեսուելայի նախագահ Ուգո Չավեսը հայտարարել է, որ ինքը կքվեարկեր նախագահ Բարաք Օբամայի օգտին, եթե ԱՄՆ քաղաքացի լիներ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Չավեսի կարծիքով, Օբաման իր հերթին կքվեարկեր Վենեսուելայի ներկայիս նախագահի վերընտրության օգտին, եթե մեծացած լիներ Կարակասի բանվորական թաղամասում: «Օբաման վերջերս մի առիթով ասաց շատ խելամիտ եւ արդարացի բան. «Վենեսուելան վտանգ չի ներկայացնում ԱՄՆ-ի շահերի համար», հիշեցրել է Չավեսը, ավելացնելով, որ իր ամերիկացի պաշտոնակիցը «հաճելի տղա է»:**

**Վենեսուելայի եւ ԱՄՆ-ի նախագահները վերընտրվելու դեպքում կկարողանային սկսել բնականոն հարաբերությունների նոր ժամանակաշրջան, ընդգծել է Չավեսը: Վենեսուելայի նախագահի ընտրությունները նախատեսված են հոկտեմբերի 7-ին, իսկ ԱՄՆ-ում նախագահական ընտրությունները տեղի կունենան նոյեմբերի 6-ին: Չավեսը Վենեսուելայի նախագահն է 1999-ից, իսկ Օբաման նախագահ ընտրվեց 2008-ին:**

**Չնայած Չավեսի ջերմ խոսքերին, երկու երկրների հարաբերությունները մնում են լարված, իսկ 2010-ից Կարակասում եւ Վաշինգտոնում ամերիկացի եւ վենեսուելացի դեսպաններ չեն աշխատում:**

# Նա «հասկանում է», որ իրավունք չունի, բայց ...

*1-ին էջից*

**Մարդն, ինչպես տեսնում ենք, ուղղակի աղերսել է ԵԽԽՎ Բյուրոյին, որպեսզի իրեն թույլ տան ներկա գտնվելու նիստին եւ հնչեցնելու ադրբեջանական կողմի տեսակետը: Ինչո՞վ է պայմանավորված նման ստորացումը՝ գիտակցել, որ ընթացակարգի համաձայն ներկա գտնվելու իրավունք չունի, բայց «հանուն օբյեկտիվության» խնդրել, որ թույլ տան «գոնե պատուհանից ներս մտնել» եւ մի քանի անկապ բառեր ասել:**

**Առաջին հայացքից կարող է տպավորություն ստեղծվել, թե Սեիդովը «պապից ավելի կաթոլիկ է» կամ Սաֆարովի հարցը նրան այնքան է հուզում, որ ոչնչի, անգամ սեփական արժանապատվության կորստի առջեւ կանգ չի առնում: Իրականում նա առաջնորդվել է բոլորովին այլ շարժառիթներով:**

**Բանն այն է, որ Ստրասբուրգ մեկնելու նախօրյակին Սեիդովը խստագույն ճնշման տակ է հայտնվել: Նրա գլխավորած՝ Ադրբեջանի պետական լեզվաբանական համալսարանում Վերահսկիչ պալատը լրջագույն յուրացումներ եւ պատասխանատու անձանց կողմից պաշտոնեական զեղծարարության աղաղակող փաստեր է բացահայտել, որոնց հիման վրա դատախազությունը հարուցել է քրեական գործ, ընթանում է նախաքննություն:**

**Սեիդովն ստիպված է եղել հայտարարել, թե ինքն է խնդրել, որ «իրավապահ մարմինները ստուգումներ անցկացնեն», բայց դրան, իհարկե, ոչ ոք չի հավատում: Ո՞վ է հրահրել Սեիդովի դեմ գործը՝ մնում է գաղտնիք, թեեւ ադրբեջանական մամուլի որոշ հրապարակումների համաձայն՝ դրա թիկունքում կանգնած է առաջին տիկին Մեհրիբան Ալիեւան:**

**Կարելի է եզրակացնել, որ ԵԽԽՎ նստաշրջան ուղեւորվելիս Սեիդովին ներկայացվել է հստակ առաջադրանք՝ ամեն գնով կանխել Սաֆարովի հարցով որեւէ քննարկում այդ կառույցում: Ըստ երեւույթին, առաջադրանքի կատարումից է կախված նրա հետագա ճակատագիրը: Սեիդովը Ստրասբուրգում ենթարկվել է կատարյալ ֆիասկոյի: Ուստի պետք է սպասել, որ Բաքու վերադառնալուց նրան սպասում են բավական լուրջ անհարմարություններ: Չի բացառված, որ հենց օդանավակայանում էլ նրան ձերբակալեն:**

**Իլհամ Ալիեւը բաց չի թողնի «մի կրակոցով երկու նապաստակ խփելու» առիթը. Սեիդովը կմեղադրվի կոռումպացվածության մեջ, միաժամանակ էլ կներկայացվի որպես «ադրբեջանական կողմի արդարացի մոտեցումները» Ստրասբուրգում պաշտպանելու անընդունակ գործիչ:**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 1.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: